

**Հայաստանի Հանրապետության 5-րդ և 6-րդ /համատեղ/  
պարբերական ազգային զեկույցը Ռասայական խտրականության  
բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի (21 դեկտեմ-  
բերի 1965թ.) իրականացման վերաբերյալ**

**Ներածություն**

1. Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացվել է 1993թ. հուլիսի 23-ին: Համաձայն Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 1-ին պարբերության պահանջի, Կոնվենցիային միացած երկրները ՄԱԿ Ռասայական խտրականության վերացման հարցերով կոմիտեին պետք է պարբերաբար ներկայացնեն Կոնվենցիայի դրույթների կատարման վերաբերյալ ազգային զեկույց: Սույն փաստաթուղթը պարունակում է ՀՀ իշխանությունների ներկայացրած 5- րդ և 6-րդ համատեղ պարբերական զեկույցը:

2. Զեկույցն անդրադառնում է, մասնավորապես, ՀՀ իշխանությունների կողմից ձեռնարկված օրենսդրական, դատական, վարչական և այլ միջոցառումներին՝ ուղղված Կոնվենցիայի դրույթների կատարմանը: Այն մշակվել է Ռասայական խտրականության վերացման հարցերով կոմիտեի մտահոգությունների ու առաջարկությունների լույսի ներքո՝ ներկայացված ՀՀ 3-րդ և 4-րդ համատեղ պարբերական զեկույցի քննարկումների արդյունքում, որոնք տեղի են ունեցել Կոմիտեի 61-րդ նստաշրջանի ընթացքում 2002թ. օգոստոսի 5-ից 23-ը:

3. Սույն զեկույցը մշակվել է ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի կողմից՝ ՀՀ Արտաքին գործերի նախարարության համակարգմամբ: Աշխատանքային խումբը կազմված է եղել հետևյալ գերատեսչությունների ներկայացուցիչներից.

- ՀՀ արտաքին գործերի նախարարություն,
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,
- ՀՀ առողջապահության նախարարություն,
- ՀՀ արդարադատության նախարարություն,
- ՀՀ կրթության և գիտության նախարարություն,
- ՀՀ մշակույթի նախարարություն,
- ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալություն,
- ՀՀ ոստիկանություն,
- ՀՀ կառավարության ազգային փոքրամասնությունների և կրոնի վարչություն,
- ՀՀ Ազգային Ժողով,
- ՀՀ գլխավոր դատախազություն,
- ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն,
- ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ:

Զեկույցի մշակման գործընթացում կարևոր ներդրում են ունեցել նաև ՀՀ նախագահի աշխատակազմը և համապատասխան հասարակական կազմակերպությունները, որոնց ներկայացուցիչների մասնակցությամբ և ՄԱԿ

Զարգացման ծրագրի երևանյան գրասենյակի օժանդակությամբ 2009թ. սեպտեմբերին անցկացված կլոր սեղան-քննարկման ընթացքում վերջիններս ներկայացրել են զեկույցի նախագծի վերաբերյալ իրենց դիտողություններն ու առաջարկությունները: Նշված քննարկմանը մասնակցել են նաև Հայաստանում հավատարմագրված միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները:

#### **Հոդված 1**

4. Հայաստանի Հանրապետությունում բնակչության մեծամասնություն կազմող հայերի հետ կողք կողքի ապրում են 11 ազգային փոքրամասնություններ: Հայաստանում մարդահամար վերջին անգամ անց է կացվել 2001թ.-ին: Հաշվի առնելով 2002թ. Ռասայական խտրականության դեմ կոմիտեի Հայաստանին առնչվող եզրափակիչ դիտարկումների (A/57/18) 275-րդ կետը ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը տրամադրել է մարդահամարի արդյունքների վրա հիմնված ՀՀ բնակչության կազմը՝ ըստ ազգությունների, քաղաքային/գյուղական բաշխումով, որը ներկայացված է սույն զեկույցի Հավելված 1-ում: Էթնիկ կազմի նշանակալի փոփոխություններ են տեղի ունեցել քաղաքական, տնտեսական և սոցիալական ոլորտներում տեղի ունեցած զարգացումների հետևանք հանդիսացող միգրացիոն գործընթացների արդյունքում: Հավելված 1-ը ներկայացնում է նաև 2002-2008թթ. ժամանակահատվածում միգրացիոն տեղաշարժերի պատկերը և կենդանի ծնվածների ու մահացածների բաշխումը՝ ըստ ազգային պատկանելության:

5. Երբ 2002թ. Կոմիտեն իր եզրափակիչ դիտարկումների 285-րդ կետում բարձրացրել էր ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի ստեղծման գործընթացի խթանման ու դրա գործունեության վերաբերյալ տեղեկատվության տրամադրման անհրաժեշտությունը, ՀՀ-ում արդեն ակտիվորեն ընթանում էին այդ ինստիտուտի ստեղծման աշխատանքները: «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2003թ. հոկտեմբերի 21-ին, ուժի մեջ է մտել 2004թ. հունվարի 1-ից: Սույն օրենքի ընդունման կապակցությամբ ՀՀ նախագահի 2004թ. փետրվարի 19-ի հրամանագրով ուժը կորցրած ճանաչվեց ՀՀ նախագահին առընթեր մարդու իրավունքների հանձնաժողովի ստեղծման վերաբերյալ ՀՀ նախագահի 1998թ. ապրիլի 27-ի հրամանագիրը:

2004թ. փետրվարի 19-ին ՀՀ Նախագահի հրամանագրով Լարիսա Ալավերդյանը նշանակվել է ՀՀ Մարդու իրավունքների առաջին պաշտպան և իր պարտականությունների կատարման անցել նույն թվականի մարտի 1-ից: ՀՀ նախագահի կողմից խորհրդարանում ներկայացված քաղաքական ուժերի հետ համաձայնությամբ Մարդու իրավունքների պաշտպանի նշանակումը միջանկյալ լուծում էր մինչև ՀՀ Սահմանադրության մեջ փոփոխությունների կատարումը, որոնք ընդունվեցին 2005թ.՝ սահմանելով օմբուդսմենի ընտրության կարգը: 2006թ. փետրվարի 17-ին Ազգային ժողովում կայացած ընտրությունների արդյունքում, հավաքելով պատգամավորների ձայների ընդհանուր թվի ավելի քան 3/5-ը (համաձայն ՀՀ Սահմանադրության 83.1 հոդվածի), Արմեն Հարությունյանն ընտրվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպան՝ 6 տարի ժամկետով:

Այս նորաստեղծ ինստիտուտի նպատակներն են պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների և հիմնարար ազատությունների

պաշտպանությունն ու վերականգնումը, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պետական պաշտպանության երաշխիքների ստեղծումը:

Մարդու իրավունքների պաշտպանի խնդիրներն են. բարձրացնել երկրում մարդու իրավական և իրավաբանական պաշտպանվածության աստիճանը, նպաստել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների օրենսդրական ապահովման կատարելագործմանը և ՀՀ օրենսդրության ներդաշնակեցմանը միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքներին և նորմերին, նախաձեռնել պաշտպան-իշխանություն և պաշտպան-հասարակություն կառուցողական համագործակցությունը և նպաստել այդ համագործակցության զարգացմանը, ապահովել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության հնարավորություններն ու մատչելիությունը:

Յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը Հայաստանի Հանրապետության Նախագահին, օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմիններ է ներկայացնում նախորդ տարվա ընթացքում իր գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին զեկույց, իսկ Ազգային ժողովի զարնանային նստաշրջանի ընթացքում դա ներկայացնում է Ազգային ժողովի նիստում: Մարդու իրավունքների պաշտպանը զեկույցը ներկայացնում է նաև զանգվածային լրատվամիջոցներին և համապատասխան հասարակական կազմակերպություններին: Հասարակական հնչեղություն ունեցող առանձին հարցերի կամ մարդու իրավունքների կոպիտ խախտումների, ինչպես նաև խախտումները զանգվածաբար չվերացնելու դեպքերում մարդու իրավունքների պաշտպանը կարող է հանդես գալ արտահերթ հրապարակային զեկույցներով:

Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցները հասանելի են հայերեն և անգլերեն լեզուներով [www.ombuds.am](http://www.ombuds.am) կայքէջում:

Ազգային փոքրամասնությունների համայնքների ղեկավարների և պաշտպանի գրասենյակի միջև ձևավորված են համագործակցային հարաբերություններ: Պաշտպանը և նրա աշխատակազմը մասնակցում են ազգային փոքրամասնությունների համայնքների բոլոր միջոցառումներին:

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի ստացած փոքրաթիվ բողոքներից, որոնք առնչվում են ռասայական խտրականության այս կամ այն դրսևորմանը, կարելի է նշել մի քանի դեպք ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների կողմից երեխային իրենց նախընտրած լեզվով ուսուցում ապահովելու, սեփականության իրավունքի իրացման կամ առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունքի ապահովման վերաբերյալ: Այդ դիմում-բողոքների մի մասը քննարկման փուլում են, իսկ մյուսներն արդեն գտել են իրենց լուծումը համապատասխան պետական մարմինների կողմից:

6. 2002թ. Եզրափակիչ դիտարկումների 284-րդ կետով Կոմիտեն լրացուցիչ տեղեկատվություն էր խնդրել Ազգային փոքրամասնությունների համակարգող խորհրդի կոնկրետ միջոցառումների և ձեռքբերումների, ինչպես նաև Ազգությունների միության և Հակամարտությունների կարգավորման կենտրոնի գործունեության մասին:

Վերոնշյալ կառույցները բավական ակտիվ գործունեություն են ծավալել ՀՀ-ում ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտում:

Այսպես, ՀՀ ազգային փոքրամասնությունների Համակարգող խորհուրդն ստեղծվել է 2000թ. մարտին ՀՀ ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային կազմակերպությունների համագումարի արդյունքում: Ելնելով ՀՀ ազգային փոքրամասնությունների պաշտպանվածությունն ապահովելու, նրանց միջհամայնքային հարաբերություններն ակտիվացնելու, ինչպես նաև հատուկ կրթամշակութային, իրավական և այլ խնդիրների նկատմամբ պետական հոգածությունն առավել արդյունավետ դարձնելու անհրաժեշտությունից՝ 2000թ. հունիսի 15-ին ՀՀ Նախագահն իր կարգադրությամբ հավանություն տվեց Հայաստանի ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային միությունների համագումարում ՀՀ Նախագահի խորհրդականին կից ՀՀ ազգային-մշակութային միությունների գործունեությունը համակարգող խորհրդի ստեղծմանը:

Համագումարում Համակարգող խորհրդի անդամները ընտրվել են հետևյալ կերպ. ՀՀ-ում առկա 11 ազգային փոքրամասնություններից առաջադրվել են երկուական ներկայացուցիչ, որոնք ներկայացնում են յուրաքանչյուր համայնքի տարբեր կազմակերպություններ: Եթե համայնքն ունի մեկ հասարակական կազմակերպություն, ապա երկու անդամն էլ ընտրվում են տվյալ կազմակերպությունից, իսկ եթե համայնքում առկա են երկու կամ ավելի հասարակական կազմակերպություններ, ապա Խորհրդի անդամներ են ընտրվում այդ համայնքը ներկայացնող տարբեր հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից:

Այսպիսով, Խորհուրդն ունի 22 անդամ: Այն խորհրդատվական մարմին է և իր գործունեությունն իրականացնում է Խորհրդի կողմից հաստատված աշխատակարգին համապատասխան՝ նիստերի միջոցով:

Խորհրդի հիմնական գործառույթներն են.

- ազգային փոքրամասնությունների իրավունքների և ազատությունների աջակցությունն ու պաշտպանությունը,

- ազգային փոքրամասնությունների իրավունքներին առնչվող հիմնախնդիրների վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստումը,

- ազգային փոքրամասնությունների իրավունքների և ազատությունների առնչությամբ իրավական ակտերի նախագծերի քննարկումը, վերլուծությունը և առաջարկությունների պատրաստումը,

- ազգային փոքրամասնությունների կրթական-մշակութային ծրագրերին առնչվող հարցերի քննարկումը:

Խորհրդի նիստերում քննարկվում են ՀՀ վավերացված միջազգային փաստաթղթեր, որոնց մասին Խորհրդի անդամները տեղյակ են պահում ազգային փոքրամասնությունների համայնքների լայն շրջանակներին:

2000թ.-ին Խորհրդի առաջարկությամբ ՀՀ կառավարության կողմից ազգային փոքրամասնությունների կրթական-մշակութային գործունեությանը նպաստելու նպատակով տարեկան 10 միլիոն դրամ է հատկացվում Խորհրդի անդամ հանդիսացող 11 համայնքները ներկայացնող կազմակերպություններին: 2000թ.-ից ի վեր պետական բյուջեն ծրագրվում է այդ գումարի ներառումով:

Յուրաքանչյուր տարվա վերջում այդ կազմակերպությունների ներկայացուցիչները միջոցառումների պլանային և ծախսային տեղեկատվություն են ներկայացնում Խորհրդին և ՀՀ Կառավարությանը:

Յուրաքանչյուր տարվա սկզբում Խորհրդի նիստում քննարկվում և հաստատվում է միասնական միջոցառումների ցանկը: Միջոցառումներին մասնակցում են Խորհրդում ներկայացված առկա 11 ազգությունների ներկայացուցիչներ: Բացի այդ յուրաքանչյուր համայնք իր ազգային տոներին հրավիրում է մնացած բոլոր էթնիկ համայնքների ներկայացուցիչներին: Այսպիսով, միասնաբար նշվում են ինչպես ՀՀ պետական, այնպես էլ առանձին-առանձին էթնիկ փոքրամասնությունների ազգային տոները, կազմակերպվում են համաժողովներ և սեմինարներ, արշավներ՝ Հայաստանի պատմական վայրերին ծանոթանալու նպատակով, համերգներ, ընթերցումներ, այս կամ այն ազգության ականավոր գործչին նվիրված երեկոներ և այլն:

2006թ. Խորհրդի համակարգողի միջամտությամբ Խորհրդի անդամների ներկայացմամբ ձևավորվեց ՀՀ ազգային փոքրամասնությունների երիտասարդական ջոկատ, որն այդ տարվանից սկսած պարբերաբար փոփոխված կազմով մասնակցում է «Բազե» համահայկական երիտասարդական հավաքում: Ջոկատի մասնակցությունը իր ինքնատիպությամբ մեծ հետաքրքրություն առաջացրեց և ջերմ վերաբերմունքի արժանացավ:

Այս ամենը թույլ է տալիս ՀՀ տարածքում բնակվող ազգային փոքրամասնություններին ծանոթանալ միմյանց լեզվին, ավանդույթներին, սովորույթներին, ծիսակատարություններին, ինչն իր հերթին փոխընթացան, հանդուրժողականության մթնոլորտ է ձևավորում և նպաստում մշակույթների փոխթափանցմանն ու հարստացմանը:

2006թ. նոյեմբերի 4-5 Ծաղկաձորում ՀՀ Կառավարության ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչության հետ համատեղ տեղի ունեցավ սեմինար ԵԽ «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության Շրջանակային կոնվենցիայի», ԵԽ «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների Եվրոպական խարտիայի» կատարման վերաբերյալ Հայաստանի մասին Խորհրդատվական Կոմիտեի երկրորդ կարծիքների և «Ազգային փոքրամասնությունների մասին ՀՀ օրենքի» նախագծի վերաբերյալ:

Սեմինարին մասնակցում էին Խորհրդի անդամները, ազգային-մշակութային կազմակերպությունների նախագահները, ներկայացուցիչներ ՀՀ Կրթության և գիտության, ՀՀ Արդարադատության, ՀՀ Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություններից, Լեզվի պետական տեսչությունից, Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդից, ԵԱՀԿ-ից, Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակից, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմից և քննարկվող հարցերի հետ առնչվող այլ անձինք:

Սեմինարում հնչեցրած բոլոր կարծիքներն ու առաջարկները մանրամասնորեն քննարկվել են, տրվել են պարզաբանումներ համապատասխան գերատեսչությունների կողմից և, ի վերջո, տեղ են գտել համապատասխան փաստաթղթերում:

Պետք է նշել, որ ազգային փոքրամասնությունները նաև ակտիվ մասնակցություն են ցուցաբերում երկրի քաղաքական և հասարակական կյանքում: Պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ ՀՀ նախագահի հետ, ուր Խորհրդի անդամները անմիջականորեն նախագահին են ուղղում իրենց հուզող հարցերը:

Կազմակերպվել է կլոր սեղան Խորհրդի անդամների և ազգային փոքրամասնությունների մյուս անդամների մասնակցությամբ՝ ՀՀ Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու կապակցությամբ:

Խորհրդի անդամների նախաձեռնությամբ կազմակերպվել է նաև կլոր սեղան «Զուղայի հայկական մշակութային հուշարձանների ոչնչացումը աղբբեջանցիների կողմից և ազգային փոքրամասնությունների մշակույթների վիճակը Աղբբեջանում» թեմայով: ՀՀ ազգային փոքրամասնությունները հանդես են եկել ոճրագործությունները դատապարտող հայտարարությամբ:

Խորհրդի անդամների նախաձեռնությամբ մամլո ասուլիս է հրավիրվել, ուր ՀՀ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները հայտարարությամբ հանդես են եկել Թուրքիայում շարունակվող ռասիզմի, այլատյացության, ազգատյացության դրսևորումների դեմ:

Խորհրդի անդամներից մի քանիսը որպես դիտորդ մասնակցել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրական հանրաքվեին:

2007թ. աշնանը կազմակերպվել է Խորհրդի անդամների այցելությունը Արցախ, որտեղ նրանց հնարավորություն է ընձեռնվել հանդիպել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի, վարչապետի եւ Ազգային ժողովի նախագահի հետ, ինչպես նաև ծանոթանալ Արցախի տեսարժան եւ պատմական վայրերին:

Կազմակերպվել է արշավ Լոռու մարզ, որտեղ, Խորհրդի անդամները մասնավորապես այցելել են Հ. Թումանյանի տուն-թանգարան:

Խորհրդի անդամները այցելել են Եղեգիս գյուղում վերջերս հայտնաբերված հրեական բնակավայրը եւ գերեզմանոցը:

Համակարգող խորհրդի գործունեության ընթացքում առավել հիշարժան են.

- եզդիերեն եւ ասորերեն լեզվով տարրական դասարանների դասագրքերի տպագրությունը,

- Ազգությունների մշակութային կենտրոնի ստեղծումը, որի գաղափարը ծնվել է Խորհրդի նիստերում, այնուհետև ներկայացվել ՀՀ Նախագահին և ՀՀ կառավարությանը: 2006թ. ՀՀ կառավարությունն իրականացրեց այդ գաղափարը. Երևան քաղաքի կենտրոնում ՀՀ ազգային փոքրամասնությունների համար բացվեց Ազգությունների մշակութային կենտրոն, որը ՀՀ նախագահի անմիջական միջամտությամբ կահավորվեց և համալրվեց տեխնիկական սարքավորումներով:

- ՀՀ Նախագահի խորհրդականի առաջարկությամբ 2007-2008 ուսումնական տարում երկու նպատակային տեղերի հատկացումը եզդի (քուրդ) և ասորի շրջանավարտների համար Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի արաբագիտական բաժնում,

- 2007թ.-ից սկսեց լույս տեսնել նոր քրդական «Զագրոս» պարբերականը:

7. «Հայաստանի Հանրապետության ազգությունների միություն» հասարակական կազմակերպությունը կամավոր, ինքնակառավարվող, ինքնաֆինանսավորվող հասարակական կազմակերպություն է, որն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերում ամրագրված գաղափարներով, ինչպես նաև ՀՀ Սահմանադրությամբ: Այն չի հարում որևէ քաղաքական հոսանքի և քաղաքական նպատակներ չի հետապնդում:

Կազմակերպության իրավասության շրջանակներում են հետևյալ գործառնությունները.

- այն համակարգում է Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների գործունեությունը՝ իրենց համաձայնությամբ, հանուն բոլոր ազգությունների միջև համագործակցության և փոխըմբռնման ամրապնդման,

- մասնակցում է հանրապետության տնտեսական ու մշակութային կյանքին, կազմակերպում է ցուցահանդեսներ, երաժշտական փառատոներ,

- ամրապնդում և զարգացնում է համագործակցությունը մերձավոր և հեռավոր օտարերկրյա պետական, ազգային և հասարակական կազմակերպությունների հետ, որոնց ներկայացուցիչները համայնքներ ունեն Հայաստանում, ինչպես նաև պետականություն չունեցող ժողովուրդների համայնքների հետ:

- պետական, հասարակական, կրոնական և այլ կազմակերպությունների հետ համագործակցելով՝ օժանդակում է Հանրապետության ազգային փոքրամասնությունների քաղաքացիական, տնտեսական, սոցիալական, մշակութային և այլ իրավունքների պաշտպանությանը:

- իրականացնում է բարեգործական ակցիաներ, ինչպես օրինակ, բժշկական, նյութական աջակցություն կարիքավորներին և աշխատանքի տեղավորում:

Կազմակերպության բարձրագույն մարմինը ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ընդհանուր ժողովն է, որին մասնակցում են 5-ական ներկայացուցիչ յուրաքանչյուր ազգային փոքրամասնության հասարակական կամ մշակութային կազմակերպությունից: Կազմակերպության ընդհանուր ժողովների միջև ընկած ժամանակահատվածում կազմակերպության ղեկավարումն իրականացնում է ազգությունների խորհուրդը, որն ընտրվում է երկու տարի ժամկետով: Այս պահին ազգությունների խորհրդին անդամակցում են ազգային փոքրամասնությունների 14 հասարակական կազմակերպություն:

### **Դուրբանի հռչակագրի և Գործողությունների ծրագրի կատարում**

8. Եզրափակիչ դիտարկումների 289-րդ կետով Կոմիտեն առաջարկել էր, որպեսզի մասնակից պետությունը ներպետական օրենսդրության մեջ Կոնվենցիայի իրականացման ընթացքում ուշադրության առնի Դուրբանի հռչակագրի և Գործողությունների ծրագրի համապատասխան մասերը և տեղեկատվություն տրամադրի ազգային մակարդակով դրա իրականացման ուղղությամբ գործողությունների ծրագրերի և այլ միջոցառումների մասին:

ՀՀ իշխանությունները կարևորում են ռասայական խտրականության ցանկացած դրսևորման դեմ պայքարը թե՛ ազգային, թե՛ միջազգային մակարդակով: Դեռևս 2001թ. Դուրբանում կայացած Ռասիզմի դեմ համաշխարհային համաժողովի ընթացքում Հայաստանն ընտրվել էր համաժողովի փոխնախագահ՝ ակտիվորեն մասնակցելով դրա աշխատանքներին: Հետագայում, 2009թ. ապրիլի 20-24-ը Ժնևում կայացած Դուրբանի վերանայման համաժողովի կազմակերպչական աշխատանքների հենց սկզբից՝ 2007թ.ից, Հայաստանն ակտիվ մասնակցություն է ցուցաբերել այդ գործընթացին՝ ընտրվելով Նախապատրաստական կոմիտեի փոխնախագահ և ղեկավարելով համաժողովի վերջնական փաստաթղթի առաջին նախագծի մշակման աշխատանքները:

Դուրբանի հռչակագրի ու գործողությունների ծրագրի սկզբունքներն ընկած են ռասայական խտրականության դեմ պայքարին առնչվող ՀՀ պետական մարմինների գործունեության հիմքում: Ազգային մակարդակով դրանք հաշվի են առնվում թե՛ իրավական բարեփոխումների, թե՛ գործնական միջոցառումների իրականացման ընթացքում:

ՀՀ-ն վավերացրել է մի շարք միջազգային փաստաթղթեր, որոնք պաշտպանում են ազգային փոքրամասնությունների իրավունքները և ապահովում են կրոնի ու խղճի ազատությունը. դրանց թվում են Եվրոպայի խորհրդի «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիան», ԵԽ «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների պաշտպանության եվրոպական խարտիան», և այլն: Համապատասխանաբար փոփոխություններ են կատարվել ՀՀ օրենսդրության մեջ, ներառյալ նաև ՀՀ Սահմանդրության մեջ: ՀՀ Սահմանդրության փոփոխությունները ուղղված են պաշտպանելու մարդու իրավունքները, օրենքի առջև բոլորի հավասարությունը (14.1), ուղղված են պաշպանելու մարդու իրավունքը որոշելու և պահպանելու իր ազգային պատկանելությունը և ինքնությունը (հոդված 41), մտքի, խղճի և հավատքի ազատության (հոդված 26) և կրոնական (հոդված 8) իրավունքները: ՀՀ հիմնական օրենքը, որով կարգավորվում է կրոնական կազմակերպությունների գործունեությունը, «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքն է:

ՀՀ-ն քայլեր է ձեռնարկում ազգային փոքրամասնությունների քաղաքական, հասարակական, մշակութային կյանքում կրոնի և հայացքների ազատության հավասար իրավունքների սկզբունքների հաստատման համար: Կանխարգելիչ միջոցներ են ձեռնարկվում՝ ուղղված ռասայական, ազգային կամ էթնիկ ծագման, կրոնական հայացքների խտրականության դրսևորումների դեմ:

2004թ. հունվարին ձևավորվել է ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչությունը: Կառուցվածքային այս ստորաբաժանումը մասնակցում է ՀՀ կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի կազմմանը, ներկայացնում է առաջարկություն այդ ծրագրի կատարման և դրանում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու վերաբերյալ, իրականացնում է «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված պետության և կրոնական կազմակերպությունների միջև հարաբերությունների կարգավորումն իրականացնող և «Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ավանդույթների պահպանումը, լեզվի և մշակույթի զարգացման իրավունքի պաշտպանությունն ապահովող» ՀՀ կառավարության կողմից լիազորված մարմնի գործառույթները:

### **Փախստականներ**

9. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ փախստականները հասարակության այն խոցելի խմբերից են, որոնք առավել ենթակա են իրենց նկատմամբ ռասայական խտրականության տարբեր դրսևորումների, ՀՀ իշխանությունները ձեռնամուխ են եղել այդ երևույթների կանխարգելմանն ուղղված համապատասխան միջոցառումների իրականացմանը:

ՀՀ-ում փախստականների հարցերով լիազոր պետական կառավարման մարմինը մշտապես ձեռնարկել և ներկայումս էլ ձեռնարկում է հնարավոր բոլոր



միջոցները ՀՀ-ում ապաստան հայցողների և փախստական ճանաչված անձանց միջազգային նորմերով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավունքների և ազատությունների լիարժեք և հավասար պաշտպանությունը երաշխավորելու համար: Դրա մասին է վկայում այն փաստը, որ 1999թ. «Փախստականների մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո բազմիցս կատարվել են ոլորտը կարգավորող իրավական ակտերի փոփոխություններ և լրացումներ, որոնցով գործող իրավական ակտերի մի շարք դրույթներ համապատասխանեցվել են միջազգային նորմերին և պրակտիկային: Ապաստան հայցողներին և փախստականներին վերաբերող իրավական ակտերում բացառվել են ռասայական խտրականության բոլոր ձևերին վերաբերող դրույթները:

10. Ուշագրավ է, հատկապես, ՀՀ ԱԾ կողմից 2008թ. նոյեմբերի 27-ին ընդունված նոր օրենքը «Փախստականների և ապաստանի մասին», որը մշակվել է ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի համագործակցությամբ: Նոր օրենքն ընդունվել է «Փախստականների կարգավիճակի վերաբերյալ» 1951թ. Ժնևի կոնվենցիայի և Արձանագրության, միջազգային այլ փաստաթղթերի պահանջներին առավելագույնս համապատասխանեցնելու նպատակադրությամբ:

Օրենքով սահմանված է «փախստական» հասկացությունը, այն է՝

«ա) այն օտարերկրյա քաղաքացին, որը ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության կամ քաղաքական հայացքների համար հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղի հետևանքով գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս և չի կարող կամ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում օգտվել իր քաղաքացիության երկրի պաշտպանությունից, կամ նա, ով, չունենալով քաղաքացիություն և գտնվելով իր նախկին մշտական բնակության երկրից դուրս, չի կարող կամ այդ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում վերադառնալ այնտեղ,

բ) այն օտարերկրյա քաղաքացին, որը ստիպված է լքել իր քաղաքացիության երկիրը, իսկ քաղաքացիություն չունեցող անձը՝ իր նախկին մշտական բնակության երկիրը՝ համատարած բռնության, արտաքին հարձակման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ հասարակա-կան կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների պատճառով»:

Նույն օրենքի 27-րդ հոդվածն ամրագրում է, որ ՀՀ-ում ապաստան ստացած փախստականները, ապաստան հայցողները և նրանց ընտանիքի անդամները՝ իրենց բնակության վայրի ընտրության և պետության տարածքում ազատորեն տեղաշարժվելու իրավունքի առումով օգտվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար սահմանված նույն իրավունքներից:

11. Կոմիտեն 2002թ. եզրափակիչ դիտարկումներում (283-րդ կետ) նշել էր, որ «Փախստականների մասին» ՀՀ նախկին օրենքի որոշ դրույթներ նախատեսում էին սահմանափակումների կիրառում 1988-92թթ.-ին Ադրբեջանից գաղթած ազգությամբ ոչ հայ ապաստան հայցողների նկատմամբ: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ թե՛ 1999թ.-ին ընդունված «Փախստականների մասին» օրենքի, թե՛ 2004թ.-ին լրացված օրենքի համաձայն, կարգավիճակի տրամադրման հարցում սահմանափակում ազգության հիմքով չի նախատեսվել:

«Փախստականների և ապաստանի մասին» նոր օրենքով ևս նման սահմանափակումներ գոյություն չունեն, իսկ դրա 64-րդ հոդվածը սահմանում է, որ «1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն բռնագաղթած անձինք, ինչպես նաև նրանք, ովքեր ՀՀ-ում ստացել են ժամանակավոր ապաստան, ՀՀ-ում ճանաչվում են փախստականներ և ապաստան ստացածներ, եթե նրանք մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստացել են և ունեն համապատասխանաբար փախստականի և ժամանակավոր ապաստանի վավեր վկայական, և նրանց որպես փախստական ճանաչելը, ինչպես նաև ժամանակավոր ապաստանի իրավունքը մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը սահմանված կարգով չի դադարեցվել»:

12. Սկսած 1999թ.-ից` ՀՀ-ում ապաստան ստանալու համար օտարերկրյա քաղաքացիներից և քաղաքացիություն չունեցող անձանցից ստացվում են բազմաթիվ դիմումներ: Հայաստանում ապաստան հայցող անձինք հիմնականում Իրանի Իսլամական Հանրապետության, Թուրքիայի, Պակիստանի, Աֆղանստանի, Սոմալիի, Վրաստանի քաղաքացիներ են:

Ապաստան են հայցել 1603 օտարերկրյա քաղաքացիներ, որոնցից 179-ը հայցել է փախստականի կարգավիճակ: Փախստականի կարգավիճակ է տրվել 24-ին, 13-ի դիմումները քննարկման փուլում են, մյուսների դիմումները մերժվել են:

Ժամանակավոր ապաստան է հայցել 1424 անձ, որոնցից 943-ը Իրաքի քաղաքացիներ են, իսկ 481-ը` այլ երկրների:

Ժամանակավոր ապաստան է տրվել Իրաքի 811 քաղաքացիների (մեծամասնությունը ծագումով հայ, 3 արաբ, 9 ասորի, 3 քրիստոնյա իրաքցի) և այլ երկրների 19 քաղաքացիների:

Քննարկման փուլում է գտնվում 241 դիմում, որոնցից 122-ը Վրաստանի քաղաքացիների դիմումներ են: Վրաստանի քաղաքացիներից 6-ը ազգությամբ օս են, 6-ը` վրացի, 5-ը` ռուս, իսկ մյուսները` հայ:

### **Ազգային փոքրամասնությունների կանանց դեմ խտրականություն**

13. ՀՀ-ում առկա են բոլոր իրավական հիմքերը, որոնք ուղղված են գենդերային պատկանելությամբ պայմանավորված կանանց իրավունքների խախտումների կանխարգելմանը: Ինչպես ՀՀ ցանկացած քաղաքացու, այնպես էլ նրանց համար հասանելի են ոտնահարված իրավունքների վերականգնման բոլոր գործող մեխանիզմները: Կանանց հանդեպ խտրականության դրսևորումներ առկա են առավելապես եզդիական և քրդական համայնքներում, ինչը, սակայն, հաճախ բխում է նրանց սովորույթներից, և որևէ համայնք թույլ չի տալիս խառնվել իրենց ներքին փոխհարաբերություններին: Նրանք շատ ավանդապահ են, և ընտանեկան ու հասարակական ողջ կենցաղը, կանանց ու տղամարդկանց, տարեցների ու երեխաների հարաբերությունները, տնտեսական կենցաղը, հոգևոր մշակույթը ամբողջովին պահպանում է ազգային նկարագիրը: Այս ոլորտում բացակայում են տարբերությունները եզդիական ու քրդական խմբերի ինքնագիտակցության միջև, որին բնորոշ է կանանց հնազանդությունը տղամարդկանց, կրտսերի ենթարկվելն ավագների, ծնողների կամքի գերակայությունը և այլն: ՀՀ համապատասխան պետական մարմիններն ապահովում են բոլորի համար կրթության հավասար

իրավունքը, ինչի շնորհիվ հնարավոր է դառնում նվազեցնել եզդիների ու քրդերի կողմից տղաների և աղջիկների կրթության հանդեպ տարբերակված մոտեցման բացասական հետևանքները:

### **Երեխայի իրավունքների պաշտպանություն**

14. Հայաստանը առանձնահատուկ կարևորություն է տալիս երեխաների պաշտպանության խնդրին: Երեխայի իրավունքների պաշտպանությունը ՀՀ-ում իրականացվում է գործող եռաստիճան համակարգի միջոցով.

- համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով,
- երեխայի իրավունքների պաշտպանության մարզային բաժիններ,
- երեխայի իրավունքների պաշտպանության Ազգային հանձնաժողով:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով ամրագրված է, որ «Երեխաներն ունեն հավասար իրավունքներ՝ անկախ իրենց և ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների (որդեգրողների, խնամակալների կամ հոգաբարձուների) ազգությունից, սեռից, լեզվից, դավանանքից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, կրթությունից, բնակության վայրից, երեխայի ծննդյան հանգամանքից, առողջական վիճակից կամ այլ հանգամանքից»:

### **Հոդված 2**

15. Հայաստանի Հանրապետությունում ստեղծված է համապատասխան օրենսդրական դաշտ ՀՀ տարածքում բնակվող փոքրամասնությունների ներկայացուցիչների իրավունքներն ու ազատություններն ապահովելու համար: Խտրականության բոլոր ձևերի դեմ պայքարի նպատակով վերջին տարիների ընթացքում լրամշակվել է հասարակական կյանքի տարբեր ոլորտները կարգավորող իրավական դաշտը և իրականացվել են բազմաթիվ գործնական միջոցառումներ:

Ռասայական խտրականության դեմ կոմիտեի եզրափակիչ դիտարկումների 277-րդ կետով պահանջվում է ռասայական խտրականությանն առնչվող դեպքերի վերաբերյալ վիճակագրական տեղեկատվություն: Սակայն շնորհիվ ՀՀ իշխանությունների կողմից ձեռնարկվող վերոնշյալ քայլերի, 2002-2008թթ. ընթացքում ազգային կամ ռասայական խտրականության հողի վրա կատարված հանցագործություններ չեն գրանցվել:

16. Այսպիսով, ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածի համաձայն, մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից: ՀՀ սահմանադրական բարեփոխումների ժամանակ ՀՀ Սահմանադրությունը լրացվել է նոր՝ 14.1 հոդվածով, որում, մասնավորապես, ասվում է.

«Բոլոր մարդիկ հավասար են Օրենքի առջև: Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»:

17. «ՀՀ քաղաքացիության մասին» օրենքի 3-րդ հոդվածով սահմանվում է, որ ՀՀ քաղաքացիները հավասար են օրենքի առաջ՝ անկախ ՀՀ քաղաքացիությունն ձեռք բերելու հիմքերից, ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ունեն Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված բոլոր իրավունքները, ազատություններն ու պարտականությունները:

«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով ևս ամրագրվում է, որ բոլորը հավասար են օրենքի առջև և առանց խտրականության հավասարապես պաշտպանվում են օրենքով:

Իր հերթին ՀՀ Քրեական օրենսգիրքը սահմանում է, որ մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատություններն ուղղակի կամ անուղղակի խախտելը՝ կախված անձի ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, որը վնաս է պատճառել անձի օրինական շահերին, պատժվում է տուգանքով կամ ազատազրկմամբ:

18. Հայաստանի Հանրապետությունը 1993 թվականի դեկտեմբերի 21-ին վավերացրել է «Աշխատանքի և զբաղմունքների բնագավառում խտրականության մասին» Աշխատանքի միջազգային կազմակերպության 111 կոնվենցիան, որն ուժի մեջ է մտել 1995 թվականի հուլիսի 29-ին և որի դրույթները իրենց արտացոլումն են գտել ՀՀ համապատասխան ներպետական իրավական ակտերում<sup>1</sup>:

<sup>1</sup> 1. ԹՅՍԻՅԷԻՅ ԹՅ ԿՆՅ Զ»Ի ճՈՒՅ Կ ԵՅ ՆՍՅ ԿՅ 1ճճՈՒՒճՈՒՅ, ճճ Կ ԿՅճՈՒՅԻ ՔՔ լ 1995Ճ. ՆճՈՒՅԵՅ 5-ՅԿ, ÷ճ÷ճԷԻ ՔՔ լ 2005Ճ. նոյեմբերի 27-Յ ՆՅ ԿՆՅ նԻ ճճԻ:

2. ԹԹ Յ ԲԷՅԻ Յ ԿնՅՅՅՅ նճՅԷ. ՅՆն, ճճ Կ ԿՅճՈՒՅԻ ՔՔ լ 2004Ճ. նոյեմբերի 9-ՅԿ:

3. ՏՅՅ. ՅՅՅ Յ ԿԻ Յ Կ. ճՈՒՅ Կ ՍՅ ՆՍՅԿՅՅճճՅ Ի Յ ԵՅ ՍճՈՒՒՅ Կ ՍՅ ԵՅԿ: ԹԹ նճՅՅն, ճճ Կ ԿՅճՈՒՅԻ ՔՔ լ 2003 Ճ. ՅճՅԵՅ 11-ՅԿ:

4. ՏՅ ՅԻ ՅԻՅ Կ Ի Յ ԵՅ ՍճՈՒՒՅ Կ ՍՅ ԵՅԿ: ԹԹ նճՅՅն, ճճ Կ ԿՅճՈՒՅԻ ՔՔ լ 2006Ճ. ÷ճԻ ճԻ Յ ճՅ 18-ՅԿ:

5. ՏՅ ՅԻ ՅԻՅ Կ Ի ճՅ ՆՅ ճԻ Յ ՅճՅ Ի Յ Յ ճճՈՒՒՅ Կ Յ ճճ ՆճԻ ճՈ Ի Յ ԵՅ ՍճՈՒՒՅ Կ ՍՅ ԵՅԿ: ԹԹ նճՅՅն՝ ԿՅճՈՒՅԻ ՔՔ լ 2004Ճ. ÷ճԻ ճԻ Յ ճՅ 18-ՅԿ:

6. ՏՅՅ ԾՅ նՅ ՅՅՅ Ի Յ Կ ԵՅ ՍճՈՒՒՅճՅճՅ Ի Յ ճՈՅԻ ճճՈՒՒՅ Կ ՍՅ ԵՅԿ | ԹԹ նճՅՅն՝ ԿՅճՈՒՅԻ ՔՔ լ 2002Ճ. ՆճՈՒՅԵՅ 3-ՅԿ:

7. ԹԹ ժճճՅճՅ Ի Յ Կ Ի Յ ճճՈՒՒՅ Կ նճՅԷ. ՅՆն, ԹԹ նճՅՅն, ճճ Կ ԿՅճՈՒՅԻ ՔՔ լ 1998Ճ. ՆճՈՒՅԵՅ 1-ՅԿ:

8. ՏԹ Յ ՍՅՅ ՅՅՅ Ի Յ ԵՅ ՍճՈՒՒՅ Կ ՍՅ ԵՅԿ: ԹԹ նճՅՅն, ճճ Կ ԿՅճՈՒՅԻ ՔՔ լ 2004Ճ. դեկտեմբերի 14-ՅԿ:

9. ՏՅՅ ԾՅ նՅ ՅՅՅ Ի Յ Կ ԵՅ ՍճՈՒՒՅ Կ ՍՅ ԵՅԿ: ԹՅՍԻՅԷԻՅ ԹՅ ԹՅ ԿՆՅ Զ»Ի ճՈՒՅ Կ նճՅՅն, ճճ Կ ԿՅճՈՒՅԻ ՔՔ լ 2001Ճ. դեկտեմբերի 4-ՅԿ:

10. ՏԹՅՍԻՅԷԻՅ ԹՅ ԿՆՅ Ի ճՅ ԵՅ ՍճՈՒՒՅ Կ ՍՅ ԵՅԿ: ԹԹ նճՅՅն՝ ԿՅճՈՒՅԻ ՔՔ լ 2005Ճ. ՍՅ ճԻ Յ 24-ՅԿ:

11. ՏՅՅ ԲԷՅԻ Յ Կ ԿնՅ Զ»Ի Յ Ի Յ Կ Ի ճճՈՒՒՅ Կ ՍՅ ԵՅԿ: ԹԹ նճՅՅն՝ ԿՅճՈՒՅԻ ՔՔ լ 2005Ճ. ՍՅ ճԻ Յ 24-ՅԿ:

12. «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության ՍՅ ԵՅԿ: ԹԹ նճՅՅն, ճճ Կ ԿՅճՈՒՅԻ ՔՔ լ 2005Ճ. հոկտեմբերի 24-ՅԿ:

13. ՏԻ ճճՈՒՒՅ Կ ՍՅ ԵՅԿ | ԹԹ նճՅՅն, ճճ Կ ԿՅճՈՒՅԻ ՔՔ լ 1999Ճ. ՅճՅԵՅ 14-ՅԿ:

14. ՏՅՅ ԲԷՅԻ Յ Կ ԿնՅ Ի ճՅ ճՈՅԻ ճճՈՒՒՅ Կ ՍՅ ԵՅԿ: ԹԹ նճՅՅն, ճճ Կ ԿՅճՈՒՅԻ ՔՔ լ 2001Ճ. սեպտեմբերի 11-ՅԿ:

15. ՏՅՅ ԾՅ նՅ ՅՅՅ ճճՈՒՒՅ Կ ՍՅ ԵՅԿ: ԹԹ նճՅՅն՝ ԿՅճՈՒՅԻ ՔՔ լ 1995Ճ. հոկտեմբերի 23-ՅԿ:

16. ԹԹ ժճճՅճՅ Ի Յ Կ նճՅԷ. ՅՆն՝ ԿՅճՈՒՅԻ ՔՔ լ 2003Ճ. ՅճՅԵՅ 18-ՅԿ:

17. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք՝ ընդունվել է 1996Ճ. ՍՅ ճԻ Յ 4-ՅԿ:

18. ՏՅճճՅճՅ Ի Յ Կ ճճՈՒՒՅ Ի Յ Կ ԵՅ ՍճՈՒՒՅ Կ ՍՅ ԵՅԿ: ԹԹ նճՅՅն՝ ԿՅճՈՒՅԻ ՔՔ լ 2005Ճ. ՆճՈՒՅԵՅ 8-ՅԿ:

19. ՏՅՅ ճԻ ճՈ ՅճՅ Ի ճճՅՅճՅճՅ ԶՅ ԲԻ ԶՅ ԿՅ ՍՅ ԵՅԿ: ԹԹ նճՅՅն՝ ԿՅճՈՒՅԻ ՔՔ լ 2003Ճ. հոկտեմբերի 21-ՅԿ:

20. ՏԻ ճճճճճճճ ՅՅճՅճՅճՅ ՍՅ ԵՅԿ: ԹԹ նճՅՅն, ճճ Կ ԿՅճՈՒՅԻ ՔՔ լ 2005Ճ. դեկտեմբերի 25-ՅԿ:

21. ՏԹՅՍԻՅԷԻՅ ԹՅ ԹՅ ԿՆՅ Զ»Ի ճՈՒՅճՅճՅ ՆՅ ԲՍՅ Կ ՅՅճՅճՅ Ի Յ Կ ԶՅ ԲԻ ԶՅ ԿՅճՈՒՒՅ Կ ՍՅ ԵՅԿ: ԹԹ նճՅՅն, ճճ Կ ԿՅճՈՒՅԻ ՔՔ լ 1993Ճ. ՅճՅԵՅ 14-ՅԿ:



փոքրամասնությունների հանդեպ խտրականության և անհանդուրժողականության խնդիրները:

Եվրոպայի խորհրդի հետ համագործակցության շրջանակներում 2008թ. ապրիլի 1-3-ը Եվրոպայի խորհուրդը ՀՀ ոստիկանության հետ համատեղ Ծաղկաձորում կազմակերպել և անցկացրել է սեմինար «Ոստիկանությունը և մարդու իրավունքները» թեմայով, որին մասնակցել է ՀՀ ոստիկանության 20 ծառայող: ՀՀ ոստիկանության ևս 20 ծառայող մասնակցել է 2008թ. հուլիսի 1-3-ը նույն թեմայով Երևանում կայացած սեմինարին:

2005թ. մայիսի 11-ին ընդունվել և 2005թ. մայիսի 28-ին ուժի մեջ է մտել «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքը: Օրենքի 5-րդ գլուխը նվիրված է ոստիկանության ծառայողի էթիկայի կանոններին, ինչը նպաստավոր դեր ունի խտրականության կիրառման դեմ պայքարում: Ավելին, ՀՀ ոստիկանության կառուցվածքում գործում է ներքին անվտանգության վարչությունը, որը քննարկում է ոստիկանության ծառայողների կողմից էթիկայի կանոնների խախտումների, քաղաքացիների կողմից ստացված դիմում-բողոքների հիման վրա քաղաքացիների նկատմամբ ոստիկանների կողմից վատ վերաբերմունքի դրսևորման դեպքերը, դրանց հիման վրա անցկացնում ծառայողական քննություններ:

### **Հոդված 3**

22. Կոնվենցիայի 3-րդ հոդվածի դրույթների իրականացման վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ, քանի որ ՀՀ իրավական համակարգը բացառում է ռասայական սեգրեգացիան և գործնականում նման դեպքեր չեն արձանագրվել:

### **Հոդված 4**

23. Կոնվենցիայի 4-րդ հոդվածի դրույթներին մանրամասնորեն անդրադառնում է հատկապես ՀՀ գործող Քրեական օրենսգիրքը, որն ուժի մեջ է մտել 2003թ. օգոստոսի 1-ին: Օրենսգրքի 226-րդ հոդվածի առաջին մասով, ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելուն, ռասայական գերազանցությանը կամ ազգային արժանապատվությունը նվաստացնելուն ուղղված գործողությունները որակվում են որպես հանցագործություն և պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից չորս տարի ժամկետով: 226-րդ հոդվածի երկրորդ մասը, որպես առաջինի ծանրացնող հանգամանք, ներառում է նաև Կոնվենցիայի 4-րդ հոդվածի մնացած դրույթները. մասնավորապես, հրապարակայնորեն կամ լրատվության միջոցներ օգտագործելով, բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, պաշտոնեական դիրքն օգտագործելով, կազմակերպված խմբի կողմից այդ արարքները կատարելը պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով: Բացի այդ 63-րդ հոդվածում պատիժը և պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքների մեջ ներառված է նաև հանցանքն ազգային, ռասայական կամ կրոնական ատելության, կրոնական մոլեռանդության շարժառիթներով կատարելը:

Իր հերթին Օրենսգրքի 392-րդ հոդվածը սահմանում է նաև, որ «արտաքսումը, ապօրինաբար կալանքի տակ պահելը, ստրկացնելը, առանց դատի զանգվածային



25. Պետությունն՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով լիազորված մարմինների և պաշտոնատար անձանց, իրավական, կազմակերպական և այլ մեխանիզմների միջոցով ապահովում է հավասարությունը օրենքի առջև՝ առանց ռասայի, մաշկի գույնի, ազգային կամ էթնիկական ծագման տարբերակման: Հատկանշական է, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը չի ստացել ռասայական խտրականության վերաբերյալ որևէ բողոք:

ՀՀ իշխանությունները, հիմնվելով գործող իրավական դաշտի վրա, ապահովում են հավասարություն Կոնվենցիայում նշված բոլոր իրավունքների իրականացման կապակցությամբ:

(ա) դատարանի և արդարադատություն իրականացնող մյուս բոլոր մարմինների առջև հավասարության իրավունք

26. ՀՀ Սահմանադրության 91-րդ հոդվածի համաձայն, ՀՀ-ում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները:

ՀՀ-ում օրենքի և դատարանի առջև բոլորի հավասարությունն ապահովվում է ՀՀ օրենսդրությամբ: 2007թ. ՀՀ Ազգային ժողովի ընդունած «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունման արդյունքում ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածը սահմանում է, որ «Իրավունքների, ազատությունների և պարտականությունների խտրականությունը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»:

27. ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը սահմանում է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը քաղաքացիների հավասարության սկզբունքներով: Մասնավորապես, 248-րդ հոդվածի համաձայն, «Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունն իրականացվում է օրենքի և գործը քննող մարմնի առաջ բոլոր քաղաքացիների հավասարության սկզբունքներով՝ անկախ նրանց ծագումից, սոցիալական և գույքային դրությունից, ռասայական և ազգային պատկանելությունից, սեռից, կրթությունից, լեզվից, կրոնի նկատմամբ ունեցած վերաբերմունքից, զբաղմունքի տեսակից և բնույթից, բնակության վայրից և այլ հանգամանքներից»:

(բ) անձնական անվտանգության և բռնությունից կամ մարմնական վնասվածքներից պետության կողմից պաշտպանության իրավունք՝ անկախ այն բանից, դրանք դրսևորվել են պետական պաշտոնյաների« թե առանձին անձանց կամ հաստատությունների կողմից

28. ՀՀ Սահմանադրությունն ապահովում է յուրաքանչյուրի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Այն նաև



երաշխավորում է յուրաքանչյուրի իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը:

(գ) քաղաքական իրավունքների կապակցությամբ, մասնավորապես, ընտրությունների մասնակցելու, ընդհանուր և հավասար ընտրական իրավունքի հիման վրա ընտրելու և ընտրվելու իրավունք, երկրի կառավարմանը, ինչպես նաև հանրային գործերին ցանկացած մակարդակով մասնակցելու իրավունք և պետական ծառայության անցնելու հավասար հնարավորության իրավունք

29. ՀՀ իրավական դաշտը լիովին երաշխավորում է վերը նշված իրավունքները: Այսպիսով, ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածը սահմանում է, որ ՀՀ տասնութ տարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու, ինչպես նաև անմիջականորեն և կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք: ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի համաձայն, պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին հինգ տարում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին հինգ տարում Հանրապետությունում մշտապես բնակվող և ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք:

30. Թեև Կոմիտեի 2002թ.-ի եզրափակիչ դիտողությունների 278-րդ կետում մտահոգություն է հայտնվում ՀՀ Ազգային ժողովում էթնիկ ու ազգային փոքրամասնությունների ներկայացվածության բացակայության առնչությամբ, սակայն այդ խմբերի համար առկա են իրավական երաշխիքներ, որոնք հնարավորություն են ընձեռում ներկայացուցիչներ ունենալ ԱԺ-ում: Բացի վերոնշյալ սահմանադրական դրույթներից, ՀՀ Ընտրական օրենսգրքի 3-րդ հոդվածն իր հերթին սահմանում է. «Ընտրական իրավունք ունեցող քաղաքացիները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրույթունից, ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն: Այդ հիմքերով ընտրական իրավունքի ցանկացած սահմանափակում հետապնդվում է օրենքով»: 4-րդ հոդվածով ապահովվում է քաղաքացիների՝ ընտրություններին մասնակցելու հավասար հիմունքներ և հավասար պայմաններ իրենց ընտրական իրավունքի իրականացման համար:

(դ) քաղաքացիական այլ իրավունքներ, մասնավորապես՝

- պետության սահմանների ներսում տեղաշարժի և բնակության ազատության իրավունք,

- ցանկացած, ներառյալ իր սեփական, երկրից հեռանալու և իր սեփական երկիրը վերադառնալու իրավունք»

31. Համաձայն ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետության տարածքում ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու իրավունք:

Յուրաքանչյուր քաղաքացի և Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետություն վերադառնալու իրավունք»:

- ամուսնանալու և ամուսին ընտրելու իրավունք

32. ՀՀ Սահմանադրության 35-րդ հոդվածի համաձայն, ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդը իրենց կամքի ազատ արտահայտությամբ ունեն ամուսնանալու ու ընտանիք կազմելու իրավունք: Իսկ ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս նրանք օգտվում են հավասար իրավունքներից: Ամուսնական հարաբերությունները կարգավորվում են նաև ՀՀ ընտանեկան օրենսգրքով, որն արգելում է ամուսնանալիս և ընտանեկան հարաբերություններում սոցիալական, ռասայական, ազգային, լեզվական կամ կրոնական պատկանելության հատկանիշներով քաղաքացիների իրավունքների որևէ սահմանափակում:

- ինչպես միանձնյա՝ այնպես էլ ուրիշների հետ համատեղ սեփականության իրավունք

33. ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածով ՀՀ-ում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը, իսկ համաձայն 31-րդ հոդվածի, յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով:

Սեփականության իրավունքն ամբողջությամբ կարգավորվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի դրույթներով (մասնավորապես դրա 4-րդ բաժինը):

- մտքի՝ խղճի և կրոնի ազատության իրավունք

- համոզմունքների ազատության և ազատ արտահայտվելու իրավունք

- խաղաղ հավաքների և միավորումներ կազմելու ազատության իրավունք

34. Հայաստանի Հանրապետությունում նշված բոլոր իրավունքները ոչ միայն ունեն իրավական երաշխավորվածություն, այլև ապահովվում են գործնականում ՀՀ համապատասխան պետական մարմինների կողմից:

ՀՀ իրավական համակարգի նորմերը, մասնավորապես Սահմանադրության 26-29-րդ հոդվածները, ինչպես նաև համապատասխան օրենքները երաշխավորում են մտքի, խղճի, կրոնի, համոզմունքների, խաղաղ հավաքներ և միավորումներ





- «Հայաստանի Եզդիների (Շարֆադինի) հետևորդներ կրոնական կազմակերպություն»,
- «ՀՀ Եզդիների Ազգային “Շեխի Շեխու Բաքրան” համայնք»,
- «Հայաստանի Հրեական կրոնական համայնք»,
- «Արևելքի ասորական կաթողիկոսության սուրբ առաքելական եկեղեցի» Հայաստանի ասորական կրոնական կազմակերպություն:

Երևանում անարգել գործում է նաև պարսկական Կապույտ մզկիթը:

Առանց պետական գրանցման գործում են նաև Լոռու մարզում գտնվող մալականների երկու համայնքները՝ Ֆիոլետովո և Լերմոնտովո գյուղերում: Ինչպես նաև վրացական եկեղեցին, որին պաշտամունքներ իրականացնելու համար տարածք է հատկացրել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին:

38. Եզրափակիչ դիտարկումներում (282-րդ կետ) Կոմիտեի կողմից բարձրացված մտահոգության առնչությամբ, համաձայն որի, Հայ առաքելական եկեղեցուց ( իրավաբանական անձին անունն է՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին) բացի, այլ կրոնական կազմակերպությունների հանդեպ ստեղծվում են սահմանափակումներ բարեգործական աշխատանքների ու պաշտամունքի վայրերի կառուցման ընթացքում, անհրաժեշտ է նշել, որ ՀՀ Կառավարության Ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչությունը պաշտամունքի վայրեր կառուցելու հետ կապված որևէ խնդրի մասին հիմնավոր ահազանգ չի ստացել: Բազմաթիվ կրոնական կազմակերպություններ կառուցել են իրենց պաշտամունքի նոր վայրերը և անխափան իրականացնում են իրենց կրոնական պրակտիկան:

Ավելին, ՀՀ Կառավարության Վարկային և մարդասիրական օգնության ծրագրերի վարչությունն իրականացնում է վարկերի, մարդասիրական օգնության համակարգման և վերահսկման կառավարական հանձնաժողովի աշխատակազմի գործառնությունները: Սույն հանձնաժողովը քննարկում է տարբեր, այդ թվում նաև կրոնական ու բարեգործական կազմակերպությունների ծրագրերի՝ ավելացված արժեքի հարկից ազատելու դիմումները: Արդյունքում կրոնական, կրոնաբարեգործական, ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների բազմաթիվ ծրագրեր ազատվում են այդ հարկից: Օրինակ, 2008թ. երկրորդ կեսին Հայ ավետարանչական ընկերակցության կողմից ՀՀ Կառավարության ծրագրերի համակարգման հանձնաժողովին ներկայացվել է 8 ծրագիր, որոնք տրվել է ավելացված արժեքի հարկից ազատելու դրական եզրակացություն:

39. ՀՀ-ն պետական պաշտպանության ներքո է վերցրել ՀՀ տարածքի բոլոր պատմա-ճարտարապետական, մշակութային և կրոնական կառույցները, անկախ դրանց էթնիկ կամ կրոնական պատկանելությունից: Հայ Առաքելական Եկեղեցու և պատմական հուշարձաններից բացի (օրինակ՝ հեթանոսական տաճար, քաղկեդոնիկ եկեղեցիներ և այլն), այս պահին Հայաստանի տարածքում առկա և արդեն բացակայող կրոնական և էթնիկ համայնքների պատմական պաշտամունքային օջախներից, Մշակույթի նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության տվյալներով, պետության կողմից պաշտպանվում են հետևյալ հուշարձանները.

- Միջնադարյան հունական արձանագրություն՝ Արմավիրի մարզ, Ջրաշեն գյուղ:

- Կաթուղիկ եկեղեցի Գյումրիում՝ կառուցված 1848-1855թթ. Կանոնիկոս վարդապետ Արարատյանի կողմից:

- Ռուսական եկեղեցի Վանաձորում՝ կառուցված 1895թ., վերանորոգված 1977թ.:

- Ռուսական եկեղեցի Գյումրիում (Պլպլան ժամ)՝ կառուցված 1904թ.:

- Ռուսական եկեղեցի Երևանում՝ կառուցված 1913թ.:

- Կապույտ մզկիթ /Գեոյ մզկիթ/ Երևանում՝ կառուցված 1766 թ.: 1992 թվականին այն վերականգնվել է և այսօր բաց է այցելուների համար: Մզկիթին կից գործում են գրադարան, թանգարան, մշակութային կենտրոն, պարսկերեն լեզվի դպրոց: Երևանի Կապույտ մզկիթը արժեվորվում է որպես Անդրկովկասում պահպանված ուշ պարսկական շինարարական արվեստի աչքի ընկնող օրինակ:

- Աբաս Միրզայի /Մարդարի/ մզկիթ Երևանում՝ կառուցված 19-րդ դ. վերջերին:

- Եկեղեցի ս. Կիրիլ /ասորական եկեղեցի/՝ կառուցված 1840թ., ՀՀ Արարատի մարզ, գյուղ Դիմիտրով:

- Եկեղեցի Ուրմա /ասորական եկեղեցի/՝ կառուցված 19-րդ դ. վերջերին, ՀՀ Արարատի մարզ, գյուղ Վերին Դվին:

- Եկեղեցի ս. Սավա /հունադավան եկեղեցի/՝ կառուցված 1909թ., ՀՀ Լոռու մարզ, գյուղ Շամռուղ: Այն արժեքավորվում է որպես Հայաստանում պահպանված հունադավան եկեղեցու օրինակ:

- Հունադավան եկեղեցիներ Հանքավանում /Կոտայքի մարզ/ և Յաղդան /Լոռու մարզ/ գյուղում:

- 14-17-րդ դդ հրեական գերեզմանոց, ՀՀ Վայոց ձորի մարզ, Եղեգնաձորի տարածաշրջան, գ. Եղեգիս:

- 16-18-րդ դդ. քրդական գերեզմաններ, ՀՀ Արագածոտնի մարզ, Արագածի ենթատարածք, գ. Ռյա թագա:

- Հայաստանի տարբեր մարզերում հաշվառված են և պահպանվում են մոտ 50 աղբյուրների հուշարձան, որոնց մեծամասնությունը գերեզմանոցներ են:

40. Հայաստանը ներգրավված է Եվրոպայի խորհրդի՝ «Բոլորը տարբեր են, բոլորը՝ հավասար» ծրագրին, որի շրջանակում իրականացվող տեղական նախաձեռնություններում հատուկ տեղ է հատկացվել կրոնական և մշակութային հանդուրժողականության զարգացմանը:

41. Հաշվետու ժամանակաշրջանում իրականացված այլ գործնական միջոցառումների թվում կարելի է նշել հետևյալները.

- «Շողակաթ» հեռուստաալիքի մանկական հաղորդումների խմբագրության և ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչության համագործակցությամբ պատրաստվել է Հայաստանում բնակվող ազգությունների և կրոնական մի շարք համայնքների հեքիաթները /առասպելները/, դիցաբանությունը ներկայացնող հաղորդաշար:

- Ինչպես նշվել է վերը, 2004թ.-ին ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշմամբ Երևան քաղաքի կենտրոնում տարածք է հատկացվել ազգային

փոքրամասնություններին մշակութային կենտրոնի ստեղծման համար, որը բացվել է 2007թ.-ին:

- 2005թ. Երևանում ՀՀ ԱԳՆ և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի հովանավորությամբ «Հանդուրժողականության մշակույթ» խորագրով անց է կացվել Հայաստանի հրեա կոմպոզիտոր Վիլլի Վայների ստեղծագործությունների մենահամերգը, պատրաստվել է Վիլլի Վայների՝ համերգում հնչած և այլ ստեղծագործությունների DVD-ն,

- 2006թ. Երևանի կենտրոնում «Հանրապետական» կուսակցության ֆինանսական օժանդակությամբ կանգնեցվել է Հոլոքոստին և ցեղասպանությանը նվիրված հուշարձան,

- 2007թ. ՀՀ կառավարությունը 21 մլն դրամ է հատկացրել ՀՀ Վայոց ձորի մարզում գտնվող 14-17-րդ դդ. հրեական գերեզմանատուն-հուշարձանի բարեկարգման աշխատանքների համար, որն ավարտվել է 2008թ. աշնանը: Վերջինիս հետ կապված հանդիսավոր արարողությունը տեղի է ունեցել 2009թ. մայիսին, որին մասնակցել են նաև Իսրայելից ժամանած ներկայացուցիչներ:

Գերեզմանատունը հայտնաբերել և նախապես իր պահպանության տակ էր առել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Սյունյաց թեմի առաջնորդ Աբրահամ Եպիսկոպոս Մկրտչյանը:

- 2007թ. ՀՀ նախագահի ֆինանսական հովանավորությամբ հանրապետական մակարդակով տեղի է ունեցել ասորական համայնքի Նոր տարվա տոնակատարությունը: 2007թ. ՀՀ նախագահը ֆինանսական օժանդակություն է ցուցաբերել նաև եզդիական կրոնական համայնքին:

- 2008թ. հուլիսին ՀՀ վարչապետը իր հուշամեդալով պարգևատրել է «Հայաստանի հրեական համայնք» հասարակական կազմակերպության ղեկավար տիկին Ռիմա Վարժապետյանին:

- ԽՍՀՄ շրջանում ազգայնացված կրոնական կառույցները համապատասխան կրոնական համայնքներին վերադարձնելու գործընթացում 2005թ.-ին Ասորական կրոնական համայնքին է վերադարձվել ՀՀ Կոտայքի մարզի Արզնի գյուղի Սուրբ Մարիամ /Աստվածածին/ և Արարատի մարզի Վերին Դվին գյուղի Ումրա եկեղեցիները: 2007թ. հոկտեմբերին Ռուսական կրոնական համայնքին է վերադարձվել Ռուս Ուղղափառ եկեղեցու Երևան քաղաքի Սուրբ Տիրամոր եկեղեցին:

- Հայաստանի մի շարք հասարակական կազմակերպություններ իրականացնում են Հայաստանի տարածքում գործող կրոնական համայնքների միջև կառուցողական երկխոսություն կայացնելու ծրագրեր, հրավիրում են քննարկումներ, հեռուստահաղորդումներ:

42. Խղճի, դավանանքի, համոզմունքի ազատությունը և կրոնական կազմակերպությունների գործունեությունը կարգավորող ՀՀ այլ օրենքներից ու իրավական ակտերից կարևոր է «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքը: Հաշվի առնելով, որ մտքի, խղճի, դավանանքի ու համոզմունքի առումով կարևոր դեր ունի նաև կրոնական կամ համոզմունքից բխող դրոպապատճառներով զինվորական պարտադիր ծառայությունը այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու խնդիրը, ելնելով ՀՀ Սահմանադրական համապատասխան նորմից և «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի դրույթից, 2003թ.-ին ընդունվել է «Այլընտրանքային ծառայության









- առողջության, բժշկական օգնության» սոցիալական սպահովության և սոցիալական սպասարկման իրավունք

50. Հայաստանի Հանրապետությունում բնակչությանը բժշկական օգնություն և սպասարկում մատուցելիս ռասայական խտրականության որևէ դրսևորում նկատելի չէ: Բժշկական օգնությունը և սպասարկումը հասանելի է բոլորին՝ առանց որևէ խտրականության: Դա առաջին հերթին ամրագրված է ՀՀ օրենսդրությամբ:

Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի համաձայն, «Յուրաքանչյուր ոք ունի օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի անվճար հիմնական բժշկական ծառայություններ ստանալու իրավունք»:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածն իր հերթին սահմանում է, որ «յուրաքանչյուր ոք, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, տարիքից, առողջական վիճակից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ՀՀ-ում ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք»:

ՀՀ առողջապահության ոլորտը կարգավորում են նաև Բազմաթիվ այլ օրենքներ, ինչպես օրինակ, «Հոգեբուժական օգնության մասին», «Մարդու վերարտադրողական իրավունքի և վերարտադրողական առողջության մասին», «Մարդուն օրգաններ և /կամ/ հյուսվածքներ փոխադաստեղծելու մասին» և այլն, կառավարության որոշումներ ու այլ իրավական ակտեր, որոնցում անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելիս որևէ տարբերակում չի դրվում՝ կախված անձի ռասայական, ազգային կամ այլ հատկանիշներից:

Ինչ վերաբերում է օրենսդրության կիրառմանը և առկա փաստացի վիճակին, ապա պետք է նշել, որ բժշկական հաստատությունների կողմից լրացվող և վարվող բժշկական ոչ մի փաստաթղթում չի նշվում անձի ռասայական, ազգային կամ էթնիկական ծագման կամ այլ նմանատիպ հատկանիշների մասին: Բնակչությանը բժշկական օգնություն և սպասարկում մատուցելիս, կախված անձի ռասայական, ազգային կամ այլ հատկանիշներից, բժշկական հաստատությունների կողմից որևէ տարբերակում չի դրվում, քանի որ գոյություն ունեցող փաստաթղթերով հնարավոր չէ պարզել բժշկական հաստատությանը դիմած անձի ռասայական կամ այլ պատկանելությունը:

- կրթության և մասնագիտական նախապատրաստման իրավունք

51. Վիճակագրական տվյալները վկայում են այն մասին, որ Հայաստանում կրթության բոլոր մակարդակներում սովորողների շրջանում ի սպառ բացակայում է խտրականությունը՝ ըստ ազգային պատկանելության, և այդ դրական պրակտիկան պայմանավորված է, այլոց թվում, նաև ոլորտը կարգավորող գործուն իրավական դաշտով:

Այսպես, համաձայն ՀՀ Կրթության մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի, ՀՀ-ն ապահովում է կրթության իրավունք՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային դրություններից կամ այլ հանգամանքներից:

ՀՀ Սահմանադրության 35-րդ հոդվածն իր հերթին ամրագրում է յուրաքանչյուր քաղաքացու կրթության իրավունքը, միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է: Յուրաքանչյուր քաղաքացի ունի պետական ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթություն ստանալու իրավունք:

52. ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից յուրաքանչյուր տարի հաստատվում է ազգային փոքրամասնությունների հանրակրթական դպրոցի ուսումնական պլան, որտեղ ժամաքանակներ են հատկացվում ազգային փոքրամասնությունների մայրենի լեզվի, գրականության, մշակույթի և պատմության ուսումնասիրման համար:

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը մշակել է ազգային փոքրամասնությունների կրթության զարգացմանն ուղղված ծրագիր և ժամանակացույց, համաձայն որի, յուրաքանչյուր տարի դասագրքեր են ստացվում ՀՀ ազգային փոքրամասնությունների լեզուն, գրականությունը և մշակույթը ուսումնասիրելու համար:

Իրականացված միջոցառումների թվում կարելի է նշել հետևյալները.

- կազմվել և ներդրվել է 2008թ. «Ազգային փոքրամասնությունների հանրակրթական դպրոցի /դասարանի/ օրինակելի ուսումնական պլանը», ըստ որի, ազգային փոքրամասնությունների մայրենի լեզվի և գրականության ուսուցման համար 1-11-րդ դասարաններում հատկացված է շաբաթական 42 դասաժամ,

- անցկացվել են ազգությամբ եզդի ուսուցիչների 30-ժամյա վերապատրաստումներ / 07.01.2008-11. 01. 2008թ.-9 մասնակից, 24.03.2008-28.03.2008թ.-7 մասնակից/,

- փորձաքննության ընթացքում է «1-10 դասարանների քրդերենի և քրդական գրականության դասավանդման հայեցակարգը և ծրագիրը»: Հայաստանի քրդական ազգային խորհրդին առաջարկվել է հայեցակարգը համապատասխանեցնել 12-ամյա ուսուցման ծրագրային պահանջներին,

- Կրթության ազգային ինստիտուտի մասնագետները էական ներդրում են ունեցել 1-12-րդ դասարանների ասորերեն լեզվի և գրականության չափորոշիչի և ծրագրի մշակման գործում,

- Կրթության ազգային ինստիտուտում գործում են ՀՀ ԿԳՆ «Իրանագիտություն» և «Սեմագիտություն» առարկայական հանձնաժողովները, որոնք իրականացնում են եզդիերեն ու ասորերեն լեզուներով ուսումնական ծրագրերի, դասագրքերի, ձեռնարկների փորձաքննություն,

- ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում (այդ թվում` Երևանի պետական համալսարան, Հայաստանի պետական մանկավարժական ինստիտուտ, Բրյուսովի անվան Երևանի պետական լեզվաբանական համալսարան) դասավանդվում են բազմաթիվ լեզուներ, ներառյալ` անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, պորտուգալերեն, բուլղարերեն, ռումիներեն, հունարեն, լեհերեն, չինարեն, ճապոներեն, թուրքերեն, պարսկերեն, ռուսերեն, ուկրաիներեն, արաբերեն, եբրայերեն, ասորերեն, քրդերեն:

53. Իրականացվում են նաև աշակերտների սոցիալական պաշտպանվածությանն ուղղված աշխատանքներ: Դրանք իրականացվում են նաև

որոշ միջազգային կազմակերպությունների կողմից (GRS, World Vision, UNWFP): Այս ծրագրերը ներառում են սննդի, հագուստի և դպրոցական պիտույքների տրամադրում:

Հանրակրթական միջնակարգ դպրոցների տարրական դասարանների աշակերտներին պետությունն ապահովում է անվճար դպրոցական դասագրքերով (երեք տարի): Ազգային փոքրամասնությունների դպրոցների երեխաները նույնպես ապահովվում են դասագրքերով:

54. Ի պատասխան Եզրափակիչ դիտարկումների 280-րդ կետի, անհրաժեշտ է նշել, որ համաձայն 1999թ.-ի Կրթության ակտի, որը երաշխավորում է առանց խտրականության կրթության իրավունքը բոլոր ազգային փոքրամասնությունների համար, ՀՀ իշխանությունները գործնականում ապահովում են ազգային փոքրամասնությունների երեխաների համար մայրենի լեզվով ուսուցումը:

Այսպես, 2007թ. դեկտեմբերի 21-ին ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից ընդունվել է հրաման, որի համաձայն փոփոխություններ են կատարվել ՀՀ կրթության և գիտության նախարարի 2003թ. օգոստոսի 25-ի «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական և հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների ընդունելության կարգը հաստատելու մասին» N619-Ն հրամանում, և սահմանվել է, որ ազգային փոքրամասնությանը պատկանող քաղաքացու երեխաների ընդունելությունը հանրակրթական դպրոց կատարվում է երեխայի ազգային (մայրենի) լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող դպրոցում (դասարանում) իսկ դրա բացակայության դեպքում՝ ուսուցման լեզվի ընտրությունը կատարում են երեխաների ծնողները (նրանց օրինական ներկայացուցիչները):

2009թ. հուլիսի 10-ին ընդունվել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը, որի 4-րդ հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների հանրակրթությունը կարող է կազմակերպվել իրենց մայրենի կամ ազգային լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ:

Կրթության և գիտության նախարարություն են դիմել ռուսներ, եզդիներ, քրդեր, ասորիներ՝ ուսուցումն իրենց ազգային լեզվով կազմակերպելու խնդրանքով:

«Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիային» համապատասխան, ՀՀ Կրթության և գիտության նախարարության և Կրթության ազգային ինստիտուտի կողմից իրականացված և ներկայումս իրականացվող ծրագրերը՝ միջնակարգ, նախադպրոցական կրթության մասով, ներկայացվում են Հավելված 2-ում:

- մշակութային կյանքին հավասար մասնակցության իրավունք

55. Հայաստանի հանրապետությունում բնակվող ազգային փոքրամասնությունների մշակութային խնդիրները ներառված են մշակույթի ոլորտի օրենսդրական դաշտում: Այսպես, «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանվում է, որ «Հայաստանի Հանրապետության տարածքում հասարակության մշակութային կյանքին մասնակցելն ու մշակութային գործունեություն իրականացնելը յուրաքանչյուր մարդու անկապտելի իրավունքն է՝ անկախ նրա ազգությունից, ռասայից, սեռից,

լեզվից, դավանանքից, համոզմունքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից»:

Նույն օրենքի 8-րդ հոդվածի, այն է՝ «Ազգային փոքրամասնությունների մշակույթների նկատմամբ վերաբերմունքը», ՀՀ-ն աջակցում է իր տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնության պահպանմանն ու զարգացմանը, պետական ծրագրերի իրականացման միջոցով նպաստում է նրանց կրոնի, ավանդույթների, լեզվի, մշակութային ժառանգության, մշակույթի պահպանման, տարածման և զարգացման համար պայմանների ստեղծմանը:

Հիմք ընդունելով վերոհիշյալը՝ ՀՀ իշխանությունների կողմից պետական բյուջեից հատկացումներ են արվում համապատասխան միջոցառումների և ծրագրերի իրականացման նպատակով: 2000թ.-ից սկսած ՀՀ պետական բյուջեից տարեկան 10մլն. դրամաշնորհային գումար է հատկացվում ազգային փոքրամասնությունների կրթամշակութային խնդիրների զարգացման համար, որն իրացվում է ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների կողմից, օրինակ, իրենց ազգային տոների կազմակերպման, կիրակնօրյա դպրոցների կարիքների և այլ միջոցառումների համար: Հայաստանի տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների պատմական, հոգևոր, մշակութային արժեքների և էթնիկական ինքնության պաշտպանության խնդիրները ներառված են նաև «Ազգային անվտանգության ռազմավարության» մշակույթի ոլորտի ծրագրերում:

56. Ազգային փոքրամասնությունների միությունները ներգրավվում են հանրապետական և տեղական նշանակության մշակութային տարբեր միջոցառումներում: Ազգային փոքրամասնությունների մշակութային ժառանգության պահպանմանը, տարածմանը և զարգացմանը մեծապես աջակցում է ՀՀ կառավարության ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչությունը, որը սերտ հարաբերություններ է պահպանում ՀՀ ազգային փոքրամասնությունների համայնքների հետ:

Միայն ազգային փոքրամասնությունների համար ավանդաբար իրականացվում են.

- **ՀՀ ազգային փոքրամասնությունների կերպարվեստի և դեկորատիվ կիրառական արվեստի ցուցահանդեսներ**, որոնց մասնակցում են ստեղծագործողներ 11 համայնքներից: 2008թ. անց է կացվել 7-րդ ցուցահանդեսը (կազմակերպման համար ՀՀ պետական բյուջեից նախատեսվել է 500 հազ. դրամ):

- **ՀՀ ազգային փոքրամասնությունների երաժշտական փառատոն**, որին մասնակցում են ազգային փոքրամասնությունների բոլոր համայնքների ներկայացուցիչները: Փառատոնին ներկայացվում են ազգային երգն ու պարը, երաժշտությունը: Փառատոնը ավանդաբար անց էր կացվում Երևանում, սակայն վերջին տարիներին այն կազմակերպվում է ՀՀ մարզերում, որտեղ հիմնականում բնակվում են ազգային փոքրամասնությունները: 2008թ. փառատոնն անց է կացվել ՀՀ Լոռու մարզի Ախթալա քաղաքում (կազմակերպման համար ՀՀ պետական բյուջեից նախատեսված էր 700 հազ. դրամ), որի համար ՀՀ մշակույթի նախարարը հատուկ մրցանակ է շնորհել «ՀՀ ազգային փոքրամասնությունների երաժշտական փառատոնին՝ 2008թ.-ի լավագույն մարզային մշակութային նոր նախագծի համար»:

- 2008թ.-ից իրականացվում է նոր ծրագիր՝ «ՀՀ ազգային փոքրամասնությունների հուշարձանների այցելության կազմակերպում և տեսաֆիլմի ստեղծում»: Ծրագիրն ունի ոչ միայն գիտաճանաչողական բնույթ, այլև նպատակ ունի հասարակությանը ներկայացնել մշակութային ժառանգությունը (կազմակերպման համար ՀՀ պետական բյուջեից նախատեսվել էր 600.0 հազ. դրամ):

Վերոնշյալ ծրագրերի իրականացման համար 2009թ. պետական բյուջեով նախատեսվում է 2300.0 հազ դրամ, 2008թ.-ի 1800.0 հազ. դրամի դիմաց:

- 2008թ.-ին սկսված ծրագրերից է ազգային փոքրամասնությունների գրականության հրատարակումը: Մասնավորապես, հրատարակել է «Ազգային փոքրամասնությունների ստեղծագործողների գրական ավանախ», որտեղ ներկայացվել են ազգային փոքրամասնությունների ստեղծագործողները, ինչի համար ՀՀ պետական բյուջեից 2008թ. տրամադրվել է 950.0 հազ. դրամ:

- Կարելի է հիշատակել նաև մի շարք միջոցառումներ, որոնք կազմակերպվել են «ՀՀ ազգությունների խորհուրդ» ՀԿ կողմից: Այսպիսով, ի թիվս բազմաթիվ այլ միջոցառումների, մայրենի լեզվով **հեքիաթասացության մրցույթին** մասնակցել են նաև ազգային փոքրամասնությունների երեխաները և արժանացել մեդալների իսկության հավատարմագրերով:

2008թ. Ա. Բարաջանյան համերգասրահում նշվել է **երեխաների պաշտպանության օրը**, որտեղ ազգային փոքրամասնությունների երեխաները ցուցադրել են իրենց արվեստը, երգն ու պարը:

Խորհուրդը կազմակերպել է նաև «Քուրդ մտավորականության խորհուրդ» ՀԿ-ի նախագահ **Ամարիկե Սարդարի «Свадьбу сыграли дважды» գրքի շնորհանդեսը**, որը լույս է տեսել 2005թ.:

57. Հայաստանի ազգային գրադարանում ազգային փոքրամասնությունների լեզուներով պահվում և օգտագործվում են մոտ 450 հունարեն, 686 քրդերեն և բազմահազար ռուսերեն գրքեր: Այդ լեզուներով մեծաքանակ գրականություն կա նաև հանրապետության այլ գրադարաններում, իսկ ռուսերենով՝ նաև դպրոցական գրադարաններում: Ինչպես հիշյալ, այնպես էլ այլ փոքրամասնությունների լեզուներով (այդ թվում՝ ՀՀ ազգային փոքրամասնություններից վրացերենի, ուկրաիներենի, բելառուսերենի, գերմաներենի, լեհերենի) զգալի ծավալի գրականություն կա ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի և համապատասխան գիտահետազոտական ինստիտուտների գրադարաններում:

58. 2008 թ. «Գրականության գծով պետական պատվեր» ծրագրով հրատարակվել է նաև գրականություն ազգային փոքրամասնությունների լեզուներով: Հրատարակվող գրականության ցանկը բերվում է ստորև ներկայացվող աղյուսակներում.

<b>Ազգային փոքրամասնությունների գրականություն /2008 թ./</b>						
			<i>Ծավալը (տպագրական մամուլ)</i>	<i>Տպաքանակը (օրինակ)</i>	<i>Տպագրվող մեկ օրինակի գինը (դրամ)</i>	<i>Գումարը (հազ. դրամ )</i>

1.	Ամարիկե Մարդար	«Մեր գյուղը», պատմվածքներ /քրդերեն/	7.0	500.0	1.000	500.0
2.	Շամոյան Սմո	Ընտրանի	10.0	500.0	900	450.0
<b>Ընդամենը</b>			<b>17.0</b>	<b>1.000.0</b>		<b>950.0</b>

<b>Ազգային փոքրամասնությունների գրականություն 2009 թ./</b>						
			<b>Ծավալը (տպագրակա ն մամուլ)</b>	<b>Տպաքանակը (օրինակ)</b>	<b>Տպագրվող մեկ օրինակի գինը (դրամ)</b>	<b>Գումարը (հազ. դրամ )</b>
1.	Ահմադե Խանի (թարգմանություն քրդերենից՝ Չ. Ռաշ-ՄստոյանՀ)	«Մամ ու Զին»	10.0	300.0	1000	300.0
2.	Սամանդ Միմա	Պատմվածքներ, քրդերեն	8.0	300.0	800.0	240.0
<b>Ընդամենը</b>			<b>18.0</b>	<b>600.0</b>		<b>540.0</b>

(գ) ցանկացած վայր կամ հասարակական սպասարկման համար նախատեսված ցանկացած օբյեկտ, ինչպես, օրինակ, տրանսպորտ, հյուրանոցներ, ռեստորաններ, սրճարաններ, թատրոններ ու զբոսայգիներ մուտք գործելու իրավունք

59. ՀՀ-ում բացակայում է ազատ տեղաշարժի սահմանափակման խնդիրը: ՀՀ քաղաքացի և բնակիչ հանդիսացող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներն օգտվում են ՀՀ Սահմանադրությամբ և օրենսդրությամբ սահմանված բոլոր իրավունքներից ու ազատություններից:

Ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունները միջոցառումներ են կազմակերպում ՀՀ ցանկացած մշակութային օջախում, հասարակական սպասարկման ցանկացած օբյեկտում՝ ըստ իրենց ընտրության: Նրանք երբևէ չեն հանդիպել որևէ խտրականության կամ արգելքի հասարակական վայրերում միջոցառումներ կազմակերպելիս: Միջոցառումները, որոնք կազմակերպում են ՀՀ ազգային փոքրամասնությունները զբոսայգիներում, դպրոցներում, մշակույթի օջախներում և հասարակական սպասարկման օբյեկտներում, բազմաքանակ են, և դրանք մեկ առ մեկ թվարկելն անհնար է: Այնուամենայնիվ, նշենք դրանցից մի քանիսը վերջին շրջանում.

2007թ-ին Ծաղկաձորի պանսիոնատներից մեկում ՀՀ ռուսական համայնքը կազմակերպեց “Հայաստանում բնակվող ռուս հայրենակիցների խնդիրները” թեմայով առաջին հանրապետական խորհրդաժողովը:



2008թ. “Ոսկե պատառաքաղ” ռեստորանում Նոր տարին նշեց լեհական համայնքը:

2008թ. հրեաներն իրենց ավանդական Պուրիմ տոնը նշեցին Երևանի “Մարիոթ” հյուրանոցում: Առհասարակ, ՀՀ ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունները Նոր տարին և ծննդյան տոները նշում են ռեստորաններում:

2008թ-ին Առնո Բաբաջանյան համերգասրահում ուկրինական համայնքը նշեց Ուկրաինայի անկախության տարեդարձը: Նույն թվականին նույն դահլիճում Իսրայելի անկախության տարեդարձը նշեց հրեական համայնքը: Առնո Բաբաջանյան համերգասրահում են տեղի ունենում ազգային փոքրամասնությունների երաժշտական փառատոնները և բազմաթիվ այլ միջոցառումներ:

2009թ. փետրվարին «Հայաստանի ազգությունների էտրադային ծիածան» երիտասարդական փառատոնը տեղի ունեցավ «Արամ Խաչատրյան» համերգասրահում:

2009թ. մարտին Երևանի Հաղթանակի զբոսայգում բացվեց Հայաստան-Իսրայել «բարեկամության ծառուղի»՝ ի պատիվ Իսրայելի պետության 60-ամյակի:

2009թ. մարտին Երևանի հաղթանակ զբոսայգու տարածքում բացվեց Հրեական ծառուղի:

2009թ. մայիսին Առնո Բաբաջանյան համերգասրահում Լեհաստանի Անկախության տարեդարձը նշեց լեհական համայնքը:

2009թ. ապրիլի 27-28 Երևանի “Մետրոպոլ” հյուրանոցում տեղի ունեցավ Հարավային Կովկասի երկրների ռուս հայրենակիցների կազմակերպությունների երրորդ խորհրդաժողովը, որը կազմակերպել էր ՀՀ ռուսաստանցի հայրենակիցների օգնության և աջակցության հիմնադրամը ՀՀ-ում ՌԴ դեսպանատան հովանավորությամբ:

2009թ. աստրական համայնքի խնդրանքին ի պատասխան, Երևանի քաղաքապետի որոշմամբ Երևանի Օղակաձև այգում տեղ է հատկացվել Օսմանյան Թուրքիայում տեղի ունեցած ցեղասպանության հայ և ասորի զոհերի հուշարձանի համար:

## **Հոդված 6**

60. Սույն հոդվածի պահանջները բավարարված են առավելագույն ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ դատական օրենսգրքով: Մասնավորապես, ՀՀ դատական օրենսգրքի 90-րդ հոդվածով սահմանվում է դատավորի պատշաճ կանոնների վարքագիծ. «Դատավորն ի պաշտոնե գործելիս պարտավոր է զերծ մնալ խոսքով կամ վարքով կողմնակալություն ցուցաբերելուց, ինչպես նաև նման տպավորություն ստեղծելուց: Նման կողմնակալությունն ընդգրկում է ինչպես որոշակի անձանց նկատմամբ կողմնակալությունը, այնպես էլ կողմնակալությունը՝ հիմնված ռասայի, սեռի, դավանանքի, ազգային պատկանելության, ֆիզիկական արատների, տարիքի, սոցիալական դրության և այլ նմանատիպ հատկանիշների վրա: Սույն կետը չի խոչընդոտում դատարանին անդրադառնալ ռասայի, սեռի, դավանանքի, ազգային պատկանելության, ֆիզիկական արատների, տարիքի, սոցիալական դրության, ինչպես նաև այլ նմանատիպ հատկանիշներին, եթե վերջիններս հանդիսանում են դատական քննության առարկա»:

61. Տվյալ հոդվածի առնչությամբ անհրաժեշտ է հիշատակել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածը, որը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր անձին, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, հանդես գալ այն լեզվով, որին տիրապետում է: Այս դրույթը կարևոր նշանակություն կարող է ունենալ դատավարությունների ընթացքում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների շահերի պաշտպանության գործընթացում: Ավելին, սույն հոդվածը նաև նախատեսում է, որ «քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ քրեական դատավարության լեզվին չտիրապետող, քրեական դատավարությանը մասնակցող անձանց պետական միջոցների հաշվին հնարավորություն է տրվում թարգմանչի օգնությամբ իրականացնել սույն օրենսգրքով սահմանված իրենց իրավունքները»:

62. ՀՀ Մահմանադրության 20-րդ հոդվածը նախատեսում է իրավաբանական օգնություն ստանալու յուրաքանչյուր անձի իրավունքը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին: Մահմանադրական այս դրույթն իր ամրագրումն է ստացել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածում:

63. Իրավապաշտպան մեխանիզմների թվում անհրաժեշտ է ընդգծել նաև օմբուդսմենի ինստիտուտի դերը: «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը ևս երաշխավորում է իրավունքների արդյունավետ պաշտպանություն և խախտված իրավունքների վերականգնում, այդ թվում՝ ռասայական խտրականության ցանկացած գործողության դեպքում: Պաշտպանին կարող է դիմել ցանկացած ֆիզիկական անձ՝ անկախ ազգությունից, քաղաքացիությունից, բնակության վայրից, սեռից, ռասայից, տարիքից, քաղաքական և այլ հայացքներից ու գործունակությունից:

## **Հոդված 7**

### **Կրթություն և ուսուցում**

64. Տվյալ հոդվածի պահանջներին համապատասխան, ՀՀ կառավարության ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչության նախաձեռնությամբ ՀՀ կառավարության կայքէջում՝ [www.gov.am](http://www.gov.am), տեղադրված են ՀՀ կողմից վավերացված ոլորտին առնչվող հիմնական կոնվենցիաները և կից փաստաթղթերը, մասնավորապես.

- Տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների պաշտպանության եվրոպական խարտիա,
- Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիա և բացատրական զեկույց,
- Կոնվենցիա մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին,
- Կոնվենցիա ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին,
- Կոնվենցիա քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին:

65. Վերոնշյալ վարչության կողմից 2004թ. հրատարակվել են “Ազգային փոքրամասնությունները Հայաստանում. պարտավորություններ, հնարավորություններ” և “Խղճի, դավանանքի և համոզմունքի ազատություն. իրավունքներ, հնարավորություններ, պարտավորություններ” գրքերը:

Վարչության աշխատակիցները նաև պարբերաբար այցելում են ազգային փոքրամասնությունների համայնքներ, լինում են տեղական ինքնակառավարման մարմիններում, կրթական և մշակութային օջախներում, որտեղ քննարկվում և լուսաբանվում են ազգային փոքրամասնությունների իրավունքները, հնարավորությունները՝ որպես ՀՀ լիիրավ քաղաքացիների:

66. Հայաստանի հանրակրթական դպրոցներում շարունակվում է «Քաղաքացիական կրթության» դասավանդումը՝ ներառելով «Մարդու իրավունքը» (9-րդ դասարաններ), «Քաղաքացիական կրթություն» (10-րդ դասարաններ) և «Պետություն և իրավունք» (11-րդ դասարաններ) առարկաները: Դպրոցների ուսուցիչներն անցել են վերապատրաստման դասընթացներ: Այս առարկաների հիմնական նպատակը երեխաների մեջ ժողովրդավարական սկզբունքների նկատմամբ հարգանքի սերմանումն է, ինչպես նաև, նրանց դաստիարակումը՝ որպես Հայաստանի Հանրապետության լիիրավ և ակտիվ քաղաքացիների:

«Հասարակագիտություն» հանրակրթական դասընթացի միջին դպրոցի առարկայական ծրագրում ընդգրկվել են «Ազգային փոքրամասնությունների իրավունքները» և «Հանդուրժողականություն» թեմատիկ միավորները, իսկ ավագ դպրոցի «Համաշխարհային պատմության» բովանդակության մեջ ներառված են ազգային փոքրամասնությունների իրավունքների վերաբերյալ նյութեր:

67. Որոշ հանրակրթական դպրոցներում իրականացվում է գենդերային գիտելիքների դասավանդում՝ ըստ «Գենդերային գիտելիքների դասեր» ուսումնական ձեռնարկի: Արդյունքները ցույց են տալիս, որ տարեցտարի սովորողների շրջանում նկատվում է գենդերային հավասարության դրական ընկալում, ձևավորվում են այնպիսի ժողովրդավարական որակներ, ինչպիսիք են հարգանքը կանանց քաղաքացիական դիրքորոշման և հասարակական-քաղաքական կյանքին մասնակցության նրանց իրավունքի նկատմամբ:

Վերանայվել է ավագ դպրոցի «Հասարակագիտություն» առարկայի ծրագիրը, որում ներառվել են նաև գենդերային հավասարությանը և կանանց իրավունքներին վերաբերող չափորոշիչներ:

68. 2004 թվականից ՀՀ կրթության և գիտության նախարարությունը «Փրկեք երեխաներին» (Save the children) միջազգային կազմակերպության հետ համատեղ մասնակցում է «Երեխաներին հանդուրժողականության ուսուցման» ծրագրին, որը 5-ից 11 տարեկան երեխաներին ուսուցանում է հանդուրժողականություն, համագործակցություն, նպաստում է տարաձայնությունների հարթմանը և այլն:

Միաժամանակ 2008 թվականից ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի հետ համագործակցության շրջանակներում հանրակրթության ոլորտում իրականացվում է «Հանդուրժողականություն» ծրագիրը: Վերանայվում են առարկայական ծրագրերը և հանդուրժողականության ուսուցման տարրերը ներառվում են 1-12-րդ դասարանների ուսումնական ծրագրերի մեջ:

## **Մշակույթ**

69. Ինչպես արդեն նշվել է, ՀՀ-ում գործում են մի շարք կառույցներ, որոնք ակտիվ դեր ունեն ռասայական խտրականության դեմ պայքարի, խտրականության հանգեցնող նախապաշարմունքների վերացման, հանդուրժողականության խթանման հարցերում: Օրինակ, ստորև ներկայացվում են վերը հիշատակված Ազգությունների խորհրդի կողմից իրականացված մի շարք միջոցառումներ.

- Նշվում են ազգային փոքրամասնությունների համայնքների ազգային պետության անկախության օրվա տարելիցը:

- Նշվում են ազգային փոքրամասնությունների համայնքների ազգային ավանդական տոները:

- Կազմակերպվել է ՀՀ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հանդիպումը Ս. Պետերբուրգի գուբերնատոր Վալենտինա Մատվիենկոյի հետ ՀՀ պատկերասրահում:

- Կազմակերպել են կլոր սեղան ՀՀ Սահմանադրության հողվածների փոփոխությունները քննարկելու նպատակով և մասնակցել ՀՀ Նախագահի աշխատակազմում Սահմանադրական փոփոխությունների քննարկումերին:

- Մասնակցել են ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի կողմից կազմակերպված մարդու իրավունքների պաշտպանության հարցերին նվիրված համաժողովին, որի ընթացքում ՀՀ-ում ազգային փոքրամասնությունների իրավունքների մասին ելույթ է ունեցել Խորհրդի համանախագահ Ս. Առաքելյանը:

- 2002թ.-ից ակտիվ մասնակցություն են ունեցել վերը հիշատակված «Հայաստանում ապրող ազգությունների երաժշտական փառատոնի» կազմակերպման աշխատանքներին, որոնք անց են կացվել Երևանում /2003, 2004թթ./, Վանաձորում /2005, 2006թթ./ և Գյումրիում /2007թ./ և Ախթալայում /2008թ./:

- Մասնակցում են ՀՀ ազգային փոքրամասնությունների կերպարվեստի և դեկորատիվ կիրառական արվեստի վերոնշյալ ավանդական ամենամյա ցուցահանդեսի կազմակերպման աշխատանքներին:

- Ամեն տարի ապրիլի 24-ին այցելում են Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր:

- Ակտիվ մասնակցություն են ունեցել «Ազգային փոքրամասնությունների» մասին օրենքի նախագծի քննարկման աշխատանքներին:

- Մասնակցել են ազգային փոքրամասնություններին առնչվող զեկույցների. մասնավորապես, ԵՄ «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի» և ԵՄ «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների պաշտպանության եվրոպական խարտիայի» դրույթների իրականացման վերաբերյալ ազգային զեկույցների նախապատրաստման աշխատանքներին:

- Խորհրդի և հրեական համայնքի ջանքերով կազմակերպվել է ազգային փոքրամասնությունների երեխաների հանգստի կազմակերպումը «Միրանույշ» առողջարանային ճամբարում:

70. Ինչ վերաբերում է մամուլի և ռադիոյի ոլորտին, ապա իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- հրատարակվել են բազմաթիվ հողվածներ ազգային փոքրամասնությունների ՀԿ-ների գործունեության մասին,

- մամուլում լուսաբանվում են ազգային փոքրամասնությունների երաժշտական փառատոները և ցուցահանդեսները,

- Խորհուրդն իր կազմակերպած միջոցառումները ներկայացնում է նաև «Армения- наш дом» ամենշաբաթյա 20 րոպե տևողությամբ ռադիոհաղորդման ընթացքում, որը եթեր է տրվում Հայաստանի հանրային ռադիոյով:

71. Ազգությունների միության աշխատանքը մշտապես բարձր գնահատականի է արժանացել ՀՀ կառավարության կողմից: ՀՀ մշակույթի նախարարությունը բազմիցս պարգևատրել է Միությանը տարբեր մրցանակներով և գովասանագրերով:

**Տեղեկատվություն**

72. Եզրափակիչ դիտարկումների 281-րդ կետին համապատասխան, որով Կոմիտեն կոչ էր անում ՀՀ կառավարությանը խթանել փոքրամասնությունների լեզուներով հրատարակումներն ու հեռահաղորդակցությունը, 2009թ.-ի «Պետական աջակցություն ոչ պետական մամուլին» բյուջետային ծրագրով ազգային փոքրամասնությունների լեզուներով լույս տեսնող մամուլի հրատարակման համար նախատեսվել է 11668.0 հազ. դրամ, ինչը 17.5%-ով ավելի է, քան 2008թ.-ին: 2009թ.-ին սկսել է հրատարակվել ևս մեկ թերթ՝ վրացական համայնքի «Իվերիա» ամսաթերթը: Հրատարակվող մամուլին պետական աջակցության չափը նախատեսվում է՝ ելնելով յուրաքանչյուր թերթի պարբերականությունից և տպաքանակից, ինչը ներառված է հրատարակիչների կողմից ներկայացված հայտերում:

«Պետական աջակցություն ոչ պետական մամուլին» բյուջետային ծրագրով ազգային փոքրամասնությունների լեզուներով լույս տեսնող մամուլին 2008-2009թթ. հատկացումները բերվում են ստորև ներկայացվող աղյուսակում.

Ազգային փոքրամասնությունների լեզուներով լույս տեսնող մամուլ /2008թ./		Ընդհանուր՝ 9 627,1 հազ. դրամ
<i>այդ թվում</i>		
«Եզդիների ազգային միություն» ՀԿ	«Էզդիխանա»	1 000.0
«Եզդիների ազգային կոմիտե» ՀԿ	«Լալըշ»	1 000.0
«Ռյա-Թագա» թերթի խմբագրություն» ՍՊԸ	«Ռյա-Թագա»	1 000.0
«Մշակույթների երկխոսություն» տեղեկատվական կենտրոն» ՍՊԸ	«Պալիտրա»	500.0
«Գոլոս» ՍՊԸ	«Գոլոս Արմենիի»	500.0
«Նովոյե վրեմյա» օրաթերթի խմբագրություն» ՍՊԸ	«Նովոյե վրեմյա»	500.0
«Պատրիդա» ՀԿ	«Բյուզանդական ժառանգություն»	500.0
«Ուկրաինա» Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա» ՀԿ	«Դնիպրո-Սլավուտիչ»	2 627.1

«Լիտերա» ՍՊԸ	«Լիտերատուրնայա Արմենիա»	2 000.0
<b>Ազգային փոքրամասնությունների լեզուներով լույս տեսնող մամուլ /2009թ./</b>		<b>Ընդհանուր՝ 12168.0 հազ. դրամ</b>
<b>Թերթեր</b>		
«Եզդիների ազգային միություն» ՀԿ	«Էզդիխանա»	1000.0
«Եզդիների ազգային կոմիտե» ՀԿ	«Լալըշ»	1000.0
«Ռյա-Թագա» թերթի խմբագրություն» ՍՊԸ	«Ռյա-Թագա»	1000.0
«Գոլոս» ՍՊԸ	«Գոլոս Արմենիի»	500.0
«Ուկրաինա» Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա» ՀԿ	«Դնիպրո-Սլավուտիչ»	2668.0
«Հայաստանի քրդական ազգային խորհուրդ» ՀԿ	«Զագրոս»	1000.0
Հայաստանի հրեական համայնք	«Դավթի վահան»	500.0
«Իվերիա» վրացական բարեգործական համայնք» ՀԿ	«Իվերիա»	500.0
«Նովոյե վրեմյա» օրաթերթի խմբագրություն» ՍՊԸ	«Նովոյե վրեմյա»	500.0
<b>Ամսագրեր</b>		
«ԱՕԿՍ» ՀԿ	«Պալիտրա»	500.0
«Պատրիդա» ՀԿ	«Բյուզանդական Ժառանգություն»	500.0
«Լիտերա» ՍՊԸ	«Լիտերատուրնայա Արմենիա»	2500.0

73. «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով նախատեսվում է, որ հանրային հեռուստառադիոընկերությունը «կարող է եթերային ժամանակ տրամադրել ՀՀ ազգային փոքրամասնությունների լեզվով հատուկ ծրագրերի և հաղորդումների համար»: Նույն օրենքով հանրային հեռուստառադիոընկերության պարտականությունների թվում նշվում է, որ հեռուստառադիոլսարանին հաղորդումներ և հաղորդաշարեր մատուցելիս պետք է հաշվի առնվեն Հայաստանի ազգային փոքրամասնությունների շահերը:

Հատկանշական է, որ 2008թ.-ին սույն օրենքում կատարվեց փոփոխություն, որով հանվեց օրենքի 28-րդ հոդվածի 7-րդ մասի երկրորդ նախադասությունը, որը սահմանափակում էր ՀՀ ազգային փոքրամասնությունների լեզուներով հատուկ ծրագրերի և հաղորդումների հեռարձակման հնարավորությունը՝ սահմանելով հեռուստատեսության համար շաբաթական մինչև մեկ ժամ, իսկ ռադիոյի համար՝ օրական մինչև մեկ ժամ սահմանափակում:

Հանրապետությունում հեռարձակվում են բազմաթիվ ռուսալեզու հեռուստա- և ռադիոհաղորդումներ, որոնք բավարարում են Հայաստանի ռուսական համայնքի և բոլոր ռուսալեզու համայնքների պահանջները:

Եզդիների, ասորական, քրդական և վրացական համայնքներին ունեն մայրենի լեզվով հաղորդումներ հանրային ռադիոյով:

«Արմեն-Ակոր» մասնավոր հեռուստաընկերությունն ունի շաբաթը մեկ անգամ հեռարձակվող «Հայաստանի ազգային փոքրամասնությունները» հաղորդաշար: Հաղորդման հեղինակ և վարող է հանդիսանում ՀՀ վաստակավոր լրագրող, ազգությամբ եզդի Հ.Թամոյանը, որը վարում է նաև եզդիերեն ռադիոհաղորդումներ և հանդիսանում է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի փորձագիտական խորհրդի անդամ: Պարբերաբար ազգային փոքրամասնությունների խնդիրներին է անդրադառնում նաև «Ավետիս» հեռուստաընկերությունը:

Այն ազգային փոքրամասնությունները, որոնք չունեն հեռուստա- կամ ռադիոծրագրերի կազմակերպման հնարավորություն, օգտվում են արբանյակային համակարգից, որը տրամադրվում է Հունաստանի, Իսրայելի, Լեհաստանի, Գերմանիայի, Ուկրաինայի դեսպանատների միջոցով: